


18046

2847

2011



1, 2.

12

2547

1917

1917

1917

1917

1917

1917

1917

1917

326
D-94

uf

2847

ՃՈՐՏԵՐԻ

ԱԶԵՏԱԳՐՈՒԹԵԱՆ

ՅԻՄՆԱՄԵԱԿԸ

300

1472-80

25878-68

1003
19120

1861—1911

19 ՓԵՏՐՎԱՐԻ



(Արտատպուած «ԱՐՕՐ» ամսագրից)

32581-Ա. Դ.



Թ Ի Յ Լ Ի Ս

Էլեքտրօտպարան «ԷՊՕԽԱ», Գանձակաճա փող. № 3.

1911

27 SEP 2006
ՀԱՍ.Խ.Լ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
* С. С. Р. - А *
7/31 1922
ИМЕНА, МЯСНИЦА
* Կ. ՍՅԱՍԽԱՅԱՆԻ ԱՆՎԱՆ *

23 միլիոն գիւղացիներ ճորտեր էին, այսինքն նրանք պատկանում էին ոչ թէ իրանց, ոչ թէ ազատ մարդիկ էին, այլ իբրեւ գրատ, իբրեւ տաւալ նրանք պատկանում էին պօմէշ-չիկներին՝ հողատէրերին, որոնք նրանց վրայ կեանքի և մահուան իրաւունք ունէին, այսինքն լիակատար իրաւունք ունէին վարուել նրանց հետ՝ ինչպէս կամենում էին, վաճառել՝ ինչպէս վաճառում են եզր, ձին, շունը, փոխանակել առարկաների հետ,

ծծեալ նրանց, գանահարել, աշխատեցնել՝ որքան կամենան՝ ձրիաբար, սպանել նրանց, կախ տալ, խել նրանց կանանց, աղջիկներին, երեխաներին և ծախել կամ նուիրել ուրիշներին, պահել իբրև հարձ:

Սարսափելի կեանք էր ճորտերի կեանքը. նրանց ամբողջ կեանքը անցնում էր ծանր և դաժան աշխատութեան մէջ. նրանց բանեցնում էին իբրև գրաստներ, որովհետև իսկապէս նրանց մարդ չէին համարում: Եթէ մի ճորտ տղամարդ կամ կին հիւանդանում էր և սկսում էր ցաւից տնջալ, հառաչել, պոմէշիկի կիւնը կամ աղջիկը ասում էին. «Տեսէք այս անպիտանին, այնպէս է տնջում և հառաչում, կարծես մեզ պէս մարդ լինի, կարծես ազնուական լինի»:

Ճորտը առաւօտից երեկոյ իր կնոջ և երեխաների հետ աշխատում էր իր տիրոջ կամ աղայի համար դաշտերում, տաւնը, գոմերում, հանքերում և փոխարէնը նոյնիսկ մի կուշտ փորով ուտելու հաց չէր ստանում. նրանց մեծ մասը ապրում էր կիսաքաղցած, կիսամերկ, խոնաւ և ցուրտ բնակարանում:

Դուք կարող էք ասել, որ այսօր ևս, երբ ճորտութիւնը այլևս գոյութիւն չունի, աղքատը դարձեալ ազատ չէ. բանուորը, աշխատաւորը ազատ չէ և գերի է փողատիրոջ, կապիտալիստի ձեռքում: Ժիշտ է, կարիքը յաճախ ստիպում է չքաւորին, բանուորին ապրել ստրկութեան մէջ. յաճախ խեղճերը ստիպուած են լինում իրանց երեխաներին տալ այս և այն վարպետին աշակերտութիւն անելու ձրիաբար միայն մի փոքր հացի համար և այդ աշակերտ-երեխաները մեծ զրկանքներ են կրում, ծծ են ուտում. ճիշտ է, այսօր ծանր է բանուորների վիճակը ֆաբրիկաներում, գործարաններում, հանքերում, և ամեն տեղ բանուորը կարիք է զգում, ծանր աշխատանք է կրում, երբեմն նոյնիսկ քաղցած է մնում իր ընտանիքով, բայց այնուամենայնիւ, որքան էլ այսօր չքաւորի և բանուորի կեանքը ծանր լինի, նա հազարապատիկ աւելի լաւ է և մխիթարական, քան ճորտերի կեանքն էր. այսօրուայ խեղճը, բանուորը իր առաջ ունի յոյսը լաւ ապագայի, լաւ, պայծառ և երջանիկ օրերի, բայց ճորտերը զուրկ էին այդ յոյսից. նրանք ծնվում էին ստրկուհիներ և մեռնում ստրկուհիներ:

Եւ ահա այդ անմխիթար, այդ անյոյս ճորտական կեանքն, իրաւունքն էր, որ 200 տարի գոյութիւն ունենալուց յետոյ տապալուեց, կործանուեց 50 տարի սրանից առաջ, 1861 թուին, և տապալողը, կործանողն եղաւ Կայսր Ալեքսանդր II, որ զրա-

համար և ստացաւ «Ազատարար» մականունը երախտագէտ ժողովրդից:

Այժմ տեսնենք նախ, թէ ինչպէս գոյացաւ ճորտութիւնը Ռուսաստանում, և ապա՝ ինչպիսի հանգամանքների մէջ Կայսր Ալեքսանդր II կատարեց իր մեծ և բարերար գործը:

I

Ճորտատիրական իրաւունքը, ինչպէս ամեն մի պատմական երևոյթ հասարակական կեանքի, միանգամից չձուլուեց կազմ ու պատրաստ կաղապարով, այլ կազմուեց հետզհետէ, անցնելով մի քանի ֆազաներ, մինչև որ հասաւ իր հասունութեանը XVIII դարում, որ նրանից յետոյ սկսուեց քայքայուել... Սակայն մահը հասաւ շատ ուշ՝ գրեթէ մի դարից յետոյ:

Ճորտատիրական իրաւունքը իսկապէս մօսկովեան իշխանութեան—թագաւորութեան—ժառանգութիւն է. և երբ նա տաքածուեց համայն Ռուսաստանի վրայ, այդ ինստիտուտը մտցրեց իր ոտը կոխած տեղերում՝ Մալորօսիայում, մեր Կովկասում և այլն. ազատ մնաց միայն Սիբիրի գեղացին:

500—600 տարի մեզնից առաջ բաժան-բաժան եղած ուս իշխանութիւնները սկսում են «հաւաքուել», միանալ Մօսկվայի իշխանութեան հովանաւորութեան տակ:

Մօսկվայի իշխանութիւնը բախտաւոր աշխարհագրական դիրք ունէր. նա հեռու էր թէ այն ժամանակ զօրեղ Լիտվա-Լեհաստանից, թէ թիւրքերից: Հասկանալի է, որ ժողովուրդն էլ պիտի ձգտէր վերաբնակուել մի այդպիսի համեմատաբար անգործ երկրում, և այս հանգամանքը իր հերթին պիտի բարձրացնէր իշխանութեան նշանակութիւնը:

Մօսկվայի իշխանները հետզհետէ հարստանում, ուժեղանում էին, և շնորհիւ դրան և իրանց խրամանկ, հեռատես քաղաքականութեան՝ տիրեցին այլ իշխանութիւնների՝ Տվերի, Եարօսլավլի, Նիժնի Նովգորոդի և այլն:

Թէ Մօսկվայի իշխանութեան և թէ նրան միացած մասերի մէջ հողը նկատվում էր որպէս իշխանի, թագաւորի սեպհականութիւն, իսկ հպատակները միայն օգտվում էին այդ հողից, փոխարէնը տալով որոշ տուրք, հարկ: Թագաւորը հողը քախշում էր և բոյարների՝ ի տրիտուր նրանց պետական ծառայութեան, կամ վանքերին, եկեղեցիներին՝ հողու փրկութեան համար աղօթելու: Այդպիսով հողի տէրերն էին՝ թագաւորը

բօյարները և վանքերը: Իսկ մշակողն էր գիւղացին, որ ունեւրէն, ինչպէս գիտէք, կոչւում է крестьянинъ — քրիստոնեայ: Բայց крестьянинъ նա կոչւում էր միայն այն ժամանակ, երբ մշակում էր հող. երբ նա թողնում էր հողի մշակութիւնը, այն ժամանակ կոչւում էր «ազատ մարդ», ու հողին շինարարական կրիին ստանում էր крестьянинъ կոչումը: Այն ժամանակ չկար դասակարգային բաժանումներ: Բաժանումը ըստ արհեստի, զբաղմունքի էր, և մարդ ազատ էր մէկ զբաղմունքը փոխել միւսով՝ առանց արգելքի:

Այդ զբաղմունքների տեսակէտից մարդիկ բաժանւում էին երկու կարգի՝ «ТЯГЛЫЕ» և «СЛУЖИЛЫЕ». գիւղացիները և վաճառականները հարկ էին տալիս, լուծ էին քշում (ТЯГЛО — լուծ) և կոչւում էին «լծկան մարդիկ». «СЛУЖИЛЫЕ» կոչւում էին բօյարները և այն ամենքը, որոնք, փոխանակ հարկ տալու, այլ լուծ էին քաշում՝ անձամբ ծառայում էին հայրենիքին, զլիսաւորապէս զօրքերում:

Երկու կոչումներն էլ հաւասարապէս հարկաւոր էին հայրենիքին և միևնոյն պատիւն ունէին: Այսպէս՝ հարուստ վաճառականի պատիւը շօշափելու համար սահմանուած էր 50 ռ. տուգանք, իսկ մանր բօյարի որդունը՝ միայն 5 ռուբլի և այլն: Եւ գիւղացու պատիւը շօշափելու համար սահմանուած էր տուգանք, ի հարկէ շատ սղակատ, համեմատած նրա տնտեսական դրութեան, բայց արդէն այդ տուգանքը անպայման էր այն հանգամանքի, որ գիւղացին էլ նկատւում էր որպէս իրաւատէր մի անձ, անկախ անձնաւորութիւն:

Ինչպէս և այժմ, գիւղացիները ապրում էին գիւղերում՝ սովորաբար 5—6, սակաւ դէպքերում աւելի տներով. այդ բնակութեան տեղը կոչւում էր село, որ ունէր իր եկեղեցին: Կային և աւելի քիչ բնակութիւններ, սովորաբար անտառի կողքերին՝ деревня («деревно» բառից): Ասացինք, որ հողը նկատւում էր որպէս իշխանի, բօյարների և վանքերի սեպհականութիւն, իսկ գիւղացին ազատ կապալառու էր այդ հողերի, նրա բոլոր հետեանքներով. պայմանագրի վերջանալուց յետոյ երկու կողմն էլ կամ նոր պայման էին կապում, կամ հեռանում իրարից: Բայց հասկանալի է, որ հողատէրը աւելի ուժեղ պիտի դուրս գար այս կռուից և վերջ ի վերջոյ ընկճէր գիւղացուն:

Ի նկատի պիտի ունենալ և հետեւեալ կարևոր հանգամանքը. ազատ մշակուած հող այն ժամանակ քիչ կար. վարելու համար յաճախ կտրատում էին անտառներ, հողը մաքրում արմատներից և ապա ցանում. ինչպէս տեսնում էք, բաւական

նին և թանգարժէք աշխատանք պիտի գործ դնէր հողի մշակողը: Պէտք էր ունենալ և լծկան անասուն, և գործիք, և սերմ, և հացի այնքան պաշար, որ դիմանար մինչև հունձը, ու ապա փող՝ հարկի համար: Մի խօսքով՝ այն, ինչ որ քաղաքատնտեսութեան մէջ անուանում են կապիտալ՝ Իսկ իրաւեղից պիտի ունենար գիւղացին այդ ամենը, և այն էլ այն ժամանակուայ «թաւանի» շրջանում: Պարզ է, որ նա պիտի դիմէր հողատիրոջ օգնութեանը, որը ստանում էր սովորաբար շատ ծանր պայմանով: Գիւղացին պայմանաւորւում է մշակել հողը և տիրոջը տալ «բէկաւ» (барщина) փոխանակ նրա տուած օգնութեան (սերմ, հարկափող և այլն), իսկ զուտ հողի համար՝ «оброкъ» — կապալ՝ փողով կամ հացահատիկով: Ի հարկէ կապալը կախուած էր հողի քանակութիւնից: Իսկ հող նա վերցնում էր ի հարկէ այն քանակութեամբ, որքան ոյժը պատում էր, սովորաբար 18-ից մինչև 24 դեսեատին, նայած հողի տեսակին:

Այդ կապալը ձեւակերպւում էր պայմանագրով «порядная грамота», որոնց նմուշները մնացել են ուրեւ պատմագրութեան մէջ:

Հասկանալի է, որ զանազան պատճառներով կապալառու գիւղացին վերջ ի վերջոյ ըստ մեծի մասին իր ժամանակին չէր կարողանում կատարել պայմանագրի պահանջները. հողատիրոջը պարտական էր մնում և կամայ աւանայ մնում էր նրստած այդ հողի վրայ, որքան էլ ծանր լինէին ապագայ պայմանները:

Եւ մենք վկայ ենք լինում այն հանգամանքին, որ արդէն XVI դարի կիսում ազատ գիւղացին՝ տնտեսական պատճառներից զրդուած՝ այլ ևս չէ փոխում իր կապալը, նստում է իր տեղը «прикрѣпляется къ землѣ».

Այդ նստակեացութեանը (թող ներուի մեզ այդպէս թարգմանել «прикрѣпление къ землѣ») նպաստում էր և մի ուրիշ հանգամանք:

Մենք տեսանք, որ գիւղացին հարկ էլ պիտի տար պետական զանձարանին: Բայց ի՞նչ ձեռնտու էր, նամանաւանդ այն ժամանակ, երբ պետութիւնը լաւ կազմակերպուած չէր որպէս ադմինիստրատիվ մի մարմին, գործ ունենալ առանձին առանձին անհատների հետ, նամանաւանդ նրանց հետ, որոնք չունէին անշարժ սեպհականութիւն: Եւ ահա զանձարանը ստեղծում է «круговая порука», համայնքի պատասխանատւութիւնը, մի ինստիտուտ՝ որ գոյութիւն ունեցաւ Ռուսաստանի գիւղացիների վերաբերեալ մինչև 1900 թիւը, իսկ մեզ մօտ՝ մինչև այժմ:

Իրա էութիւնը, ինչպէս դիտէք, նրանում էր կայանում, որ հարկատու մարմին նկատվում էր գիւղը, գիւղական հասարակութիւնը, որը իր մէջ բաշխում էր հարկը այս կամ այն կերպ: Պարզ է, որ համայնքը հեշտ կերպով բաց չէր թողնի իր այն անգամին, ու կուգինար նրանից հեռանալ: չէ՞ որ նրա թողած հողի հարկը պիտի ծանրանար հասարակութեան վրայ, իսկ հող այնքան կար, որ ոչ ոք աւելին ունենալու կարիք չէր զգում:

Ձեռնառու չէր այդ հեռանալը և գանձարանի համար, և անհա 16-րդ դարի կիսում պետութիւնը իր հողի վրայ հաստատուած ազատ կապալառու-գիւղացուն (черные крестьяне) արգելում է տեղափոխուել այլ տեղեր:

Դժուար էր գիւղացու գրութիւնը այս դէպքում. հողը վատ էր մշակվում և տարէ-ցտարի. նրա ոյժը ընկնում էր. երկրում էլ տիրում էին անվերջ պատերազմներ, որոնք մեծացնում էին հարկի չափը: Հողատէրը, գանձարանն ու ազնուականը նեղում էին պարտականին: Եւ կան բազմաթիւ վկայութիւններ այն եւրոպացիների, որոնք այդ ժամանակ ճանապարհորդել են մօսկովեան թագաւորութեան մէջ, թէ ինչ սարսափելի դրութեան էին հասել գիւղացիները:

Ջարմանալի չէ, որ վերջ ի վերջոյ գիւղացիները՝ թողնելով հողը՝ փախչում են «ծայրերկիրները» — окраины: Բուն երկիրը ամայանում էր, արտերը խոպանանում, ծածկվում անտառով, մացառներով: Մի անգլիացի պատմում է, որ Վոլոգդայից մինչև Եարօսլավ՝ 150 վերստի վրայ՝ նա հաշուել է 50 գիւղ, մի քանիսը շատ մեծ, որոնց բնակիչները թողել-փախել էին: Մուրօմօում, որը 1566 թուին հաշուվում է եղել 587 տուն, ութ տարուց յետոյ հազիւ մնացել էր 1/5-ը. 476 տունը թողել-փախել էր...

Պէտք է ասել, որ պետութիւնն էլ սկզբում հաշտ աչքով էր նայում այդ փախուստին. փախչողները՝ հաստատուելով ծայրագաւառներում՝ պաշտպանում էին պետութեան սահմանները՝ թիւրքերի, լիտուիցիների արշաւանքներից, թալանից:

Ի՞նչ դրութեան մէջ էին «հողին կալած» գիւղացիները:

Նրեակայեցէք երկու հարեան հողատէրիւ: Մէկի մօտ կան այնքան գիւղացիներ, որ աւելորդ են՝ եղած հողի մշակութեան համար, սակայն պարտական լինելով հողատիրոջ՝ չեն կարողանում անցնել ուրիշ կապալի: Միւսին՝ ընդհակառակը՝ պակասում են մշակող ձեռքեր: Իրանք իրար մէջ համաձայնութիւն են կայացնում. մէկը միւսին վճարելով գիւղացիների պարտքը՝ նրանց տեղափոխում է իր կալուածքը (ուսերէն «своих крестьян»): Աւելի խիղախ կամ՝ կուզէ՞ք աւագակալարոյ հողա-

տէրերը դրողում էին գիւղացիներին փախչել նախկին տեղից և իրանց մօտ հաստատուել, մի հանգամանք՝ որ շատ անգամ ժարդասպանութեամբ էր վերջանում:

Ի հարկէ այդ տեղափոխութիւնը էլ աւելի վատթարացնում էր գիւղացու գրութիւնը. չէ՞ որ նրա պարտքը տուող հողատէրը հաշուում էր իր փողի սարսափելի տոկոսները և աւելի խճճում նրա գրութիւնը. փոխվում էին նախկին ազատ կապալառու գիւղացու և հողատիրոջ յարաբերութիւնները: Գիւղացին դառնում էր ХОЛОПЪ — դուր, կուտ ընկած մարդ, որ այն ժամանակուայ օրէնքով «հլու», առանց սեպհական կամքի ծառայ էր պարտատիրոջ ձեռքին: Բայց ХОЛОПЪ-դուրը, ըստ նոյն օրէնքի, հարկ չէր տալիս: Ուրեմն ХОЛОПЪ-ների բազմանալը ձեռնառու չէր գանձարանին: Եւ մենք տեսնում ենք պատմութիւնից, որ պետութիւնը սկսում է խառնուել գիւղացիների և հողատէրերի յարաբերութեանց մէջ:

Յիշատակենք մի քանիսը:

Սովորաբար գիւղացիների գաղթը մէկ հողատէրից միւսի հողը՝ կատարվում էր աշնանը կամ վաղ գարնանը, յաճախ հունձը վերջանալուց յետոյ, որ ընկնում էր նոյեմբերին, սուսերի սուրբ Իւրիյի տօնին («Юрьевъ день»), նոյեմբերի 26-ին: Այդ միջոցը ունէր իր պարզ առաւելութիւնը, որ աւելորդ է բացատրել: Եւ անհա օրէնքը որոշում է, որ գաղթը միայն այդ ժամանակ լինի: Օրէնքը սկսում է որոշել և տուրքի սահմանը՝ գէթ այն մասով, թէ որքան պիտի տայ գիւղացին հողատիրոջ սերմի, անասունների համար, որ նա սովորաբար ստանում էր:

Որոշվում է և գանձարանին հասանելիք բաժինը, հարկը, որ անպատճառ պիտի հատուցուէր, երբ գիւղացիները գաղթում էին:

Վերջապէս օրէնքը արգելում էր վերոյիշեալ պատճառով ХОЛОПЪ դառնալը, որ ի հարկէ իրական կեանքում անկատար էր Ֆուում: Ահա այն բոլոր հանգամանքները — և՛ տնտեսական, և՛ պետական-օրինական — որոնք գիւղացուն գրին հողատիրոջ կամքի տակ: Այլ ևս կամաւոր գաղթը անհնարին էր դառնում և Ֆուում էր մի ելք, այն է՝ փախչելը:

Այդ փախուստը սաստկանում է XVI դարի վերջին, երբ շնորհիւ Բվան Ահարկուի վարած պատերազմներին՝ ճարկատուութեան պայմանները աւելի դժուարանում են, իսկ միւս կողմից Սիբիրի գրաւումը նրմակի ձեռքով բացում է փախուստի ապահով երկիր, ուր այնքան էլ հեշտ չէր հասնում կառավարութեան պատժիչ ոյժը:

Կառավարութիւնը այդ փոխուստի դէմ սկսում է հրովարտակներ արձակել մէկը միւսի հետեց:

Առաջին հրովարտակը կրում է 1597-ի տարեթիւը: Այդ հիման վրայ՝ այն գիւղացիները, որոնք փախել էին հրովարտակի հրատարակուելուց 5 տարի առաջ, ազատ էին թողնվում՝ բնակութիւն հաստատած տեղերում, իսկ 5 տարուց՝ պակասները՝ պիտի վերադառնային նախկին տէրերի մօտ: 1601 թուին Բօրիս Գօղունով թագաւորը մի այլ հրովարտակ է արձակում, որ յօդուտ մանր հողատէրերի էր, քանի որ սրանք էին կազմում զօրքերի մեծամասնութիւնը: Հրովարտակը գիւղացիներին գողթեցնելը թոյլատրում էր մանր հողատէրերին, որպէս զի դրանք չմիան առանց մշակող ձեռքերի:

Ինչ էր վերջի վերջոյ ներկայացնում ռուս գիւղացին 16-րդ դարի վերջալոյսին: Օրէնքով նա դեռ նկատվում էր որպէս ազատ կապալառու, իսկ իրապէս նա դուր, ԽՈԼՈՒՄ էր, պինդ կպած իր մշակած հողին, առանց կարողանալու գողթել աւելի ազատ տեղ, մի իրաւունք՝ որ նրան դեռ տալիս էր օրէնքը: Այդ ժամանակից է մնացել «Вотъ тебѣ дабышка и Юрьевъ день!» դարձեալը, երբ մէկը պատահում է անտէնկալի: Գիւղացու համար այլ ևս չկար Юрьевъ օրուայ ազատ գողթը...

II

XVII դարի սկզբի 13 տարին՝ մինչև այժմ թագաւորող Բօմանովեան հարստութեան ծագումը՝ յայտնի է ռուս պատմութեան մէջ «խառնակ ժամանակ» (смутное время) անունով:

Վերջացել էր Մօսկվայի թագաւորութեան հիմնադիրների տոհմը Իվան Ահարկուի որդի Ֆէօօրի մահով. գահընկէց էին եղած Բօրիս Գօղունովի ժառանգը, Գմիտրի Լնքնակոչը, Շույսկին և այլն, և երկիրը մնացել էր առանց թագաւորի, իսկ պետութիւնը հեծում էր լեհացիների ձեռքին: Պետութեան վիճակը տնօրինողը ժողովուրդն էր, որ՝ բաժան-բաժան եղած՝ կուռում էր իրար և աբտաբին թշնամու դէմ: Այդպէս չէր առաջ, երբ բոյարը թագաւորի դռնապան կամ նստած վճռում էր նրա հետ պետական գործերը և կամ կառավարում էր փոխարքայութիւններ. ազնուականները ծառայում էին ի տրիտուր ստանալով պետական հողեր, իսկ գիւղացիները կամ հողեր մըշակում, կամ զօրքերում ծառայում և զրա փոխարէն ստանում

սակաւ հող: Սեռնակ ժամանակը՝ ամեն ինչ տակն ու վրայ արեց:

Դեռ նախորդ շրջանում, Իվան Ահարկուի ժամանակ, պետութիւնը խիստ քայքայուած էր շնորհիւ պատերազմների: Սառնակ ժամանակը այդ քայքայումը աւելի ևս առաջ տարաւ: Այժմ ազնուականը ձգտում էր գիւղացուն ԽՈԼՈՒՄ դարձնելու. իր մօտ հաստատուող գիւղացիներից նա թուղթ էր վերցնում, որպէսզի յաւիտեան մնան իր հողի վրայ. գիւղացիք էլ համաձայնում էին՝ անձարութիւնից: Կարիքը սարսափելի չափերի էր հասնում: Սովի ժամանակ տաճար-հազարաւոր գիւղներ սփռուած էին երկրի մէջ, նրանց թաղող չկար: Սովից ռուսում էին մարդկային միս: Անթիւ էր ԽՈԼՈՒՄ-ութիւն ցանկացող գիւղացիների թիւը. միայն թէ գտնուէր մէկը, որ նրանց չոր հաց տար ու սովից ազատէր: Շատ տէրեր հրաժարվում էին իրանց գիւղացիներից՝ միայն թէ սով տարին նրանց չկերակրեն: Ճանապարհները լիքն էին աւազակներով, ծայրագաւառները՝ առաւել Դօնի շրջանը՝ լիքը փախստականներով, որոնք իւրացրել էին ստիակաւ կօզակ կոչումը՝ որպէս ազատ մարդիկ: Եւ ահա՝ հրը հասաւ խառնակ շրջանը, Դօնի այդ փախստականները՝ ձի հեծած՝ յարձակվում էին իրանց նախկին հայրենիքի վրայ և առնում էին անցեալի վրէժը՝ սարսափելի կոտորածով, թալանով: Ընկճուած գիւղացին էլ իր մահակով ու կեռով ոտի կանգնեց իր հարստահարողների դէմ: Անգամ թշնամի լեհացիները սարսափում էին, թէ ինչպէս ռուսը իր եղբորից սոսկալի վրէժ էր առնում:

Վերջապէս անցաւ անիծեալ տարեթիւը՝ 1601-ին, լազադուեց երկիրը և գահի հրաւիրուեց սահմանափակ իրաւունքով (земский соборъ) Բօմանովեան տան ժառանգ Միխայիլ Ֆեօօրովիչը՝ տակաւին շատ երիտասարդ, գրեթէ պատանի հասակում:

Քարուքանդ էր երկիրը. քաղաքները անմարդաբնակ, գիւղերը՝ երեսի թողնուած:

Դժուար էր և պաշտօնի պարտաւորուած ազնուականութեան դրութիւնը. չէ որ նա էլ կերակրուելու համար պէտք ունէր մշակող ձեռքերի, իսկ սրանք մեծ մասամբ փախուստի մէջ էին: Եւ ահա ազնուականները, նամանաւանդ սակաւ հողատէրերը, այսինքն մեծամասնութիւնը, խնդրում են կառավարութիւնից փոխել հին օրէնքը, որով 5 տարուց աւել փախածները ազատ էին համարվում. գէթ այդ միջոցը երկարացուէր մինչև 10 տարին, որպէս զի նրանք կարողանային յետ դարձնել իրանց հողերը մշակողներին: 1617 թուին օրէնք է

հրատարակվում այդ 10-ամեայ միջոցը որոշող իսկ դրանից յետոյ փախչողները պիտի վերադարձուէին նախկին բնակած տեղերը՝ առանց ժամանակամիջոցի: Պետրոս Մեծի հօր օրով, 1649 թուին, երբ կազմուեց ռուսաց դատաստանագիրքը, յայտնի ՍЛОЖЕНИЕ-ն, բոլորովին որոշուեց գիւղացիների դրութիւնը. նրանք ճանաչուեցին որպէս հողատէրերի սեպհականութիւն (крѣпость—դաբալա): Օրէնքը սահմանեց, որ՝ ով մինչև 1625 թիւը եղել է յայտնի հողի վրայ, այնուհետև էլ պիտի այգտեզ բնակուի իր ընտանիքով, օջախով: Փախչելու համար էլ միջոց չէր սահմանվում. փախստականը պիտի վերադարձուի իր տիրոջը: Իսկ այն հողատէրը, ով ապաստան կը տար փախստականին, ենթարկվում էր տուգանքի: Արգելվում էր և գաղթեցնելը: Բայց СЛОЖЕНИЕ-ն չէր ասում, թէ գիւղացին ազատ մարդ չէ այլ ևս. ընդհակառակը՝ նա արգելում էր ХОЛОП-ութիւնը, և այն գիւղացին, որ ստրուկ էր գրվում, աքսորվում էր Սիբիր: Հողատէրը իրաւունք չուէր նոյն իսկ իր կալուածքների շրջանում մէկ տեղից միւսը գաղթեցնել գիւղացիներին, կամ իր տանը վերցնել նրանց՝ անձնական ծառայութեան համար: Մի խօսքով՝ օրէնքը հողատիրոջ համար ապահովում էր բանող ձեռքեր... Սակաւ դէպքերում օրէնքը թոյլատրում էր բացառութիւններ. երբ հողատէրը զրկվում էր շէն կալուածքից, և մնում էր նրա ձեռքին միայն ազատ հող, այն ժամանակ նա իրաւունք ունէր նախկին կալուածքից գիւղացիներ գաղթեցնել: Կամ երբ հողատէրը սպանում էր հարևան աղնուականի գիւղացուն, փոխաբէնը պիտի տար նրան իր գիւղացիներից:

Օրէնքի շեղումները կառավարութիւնը թոյլ էր տալիս, որովհետև ազնուականներն էին նրա նեցուկը. նրանք էին գիւղատիրական ոյժը, որ այն ժամանակ նամանաւանդ՝ մեծ նշանակութիւն ունէր. եւ պետութիւնը, աչքի առաջ ունենալով իր գանձարանի շահը, աւելի սկսեց պնդացնել կախման շղթան: Նա գիւղացու բաժին հարկը սկսեց պահանջել հողատէրից, պարզ է, որ հողատիրոջ էլ պէտք էր զինել նոր իրաւունքներով՝ գիւղացիների նկատմամբ. նա ստանում էր դատաստանական-ոստիկանական իրաւունքներ. գիւղացու վերաբերեալ: Այնպէս որ, ինչպէս ռուս պատմագիրն է ասում, «XVII դարի համար մի քիչ ամօթ է ասել՝ թէ ռուս գիւղացին ազատ մարդ էր»:

Սկզբում քօղարկուած, ապա բոլորովին յայտնաբար՝ հողատէրը գիւղացու հետ վարվում էր ինչպէս մի իրի հետ. նրան ծախում է, իբրև օժիտ է տալիս իր աղջկան, տիրանում է նրա մարմնի և հողու վրայ, ծեծում է, շղթայակաղ անում նրան և

անգամ անպատիժ սպանում նրան: Уложение-ն չէր նախատեսել գիւղացու և հողատիրոջ յարաբերութեանց սահմանները. դա կարգաւորվում էր աղարով, որը վերջ ի վերջոյ պիտի դառնար հզօրի կամայականութիւնը, ինչպէս և եղաւ:

1690 թուի հրովարտակը՝ մոռանալով որ գիւղացին ըստ օրինի ազատ է՝ թոյլատրում է նրանց փոխել կալուածատէրերի միջև՝ սրանց համաձայնութեամբ: Իսկ փոխելուց դէպի վաճառքը չէ՝ որ մի քայլ էր:

Գիւղացիների այդ սարսափելի դրութիւնը սնուցանում էր այն յիշատակելի «բռնութիւնը», խռովութիւնները, որոնցով հարուստ են 17-րդ և 18-րդ դարերը, խռովութիւններ՝ որոնք չը դադարեցին և 19-րդ դարում, չնայած որ կառավարութիւնը արդէն ունէր լաւ կազմակերպուած ոստիկանական-գինուորական ոյժ. երկար կը լինէր պատմել այդ բռնութիւնի մասին. բաւական է յիշել և մինչև այժմ ժողովրդական յիշողութեան մէջ կենդանի Ստենկա Բազինի և Պուգաչով Եմելիանի յարուցած մեծ բռնութիւնը, որոնց նշանաբանն էր՝ «հող և ազատութիւն»:

Բացվում է XVIII դարը, Պետրոս Մեծի և Եկատարինէ II-ի «ոսկեդարը», և գիւղացու ըստ օրինի անորոշ դրութիւնը կաղապարվում է մի ամուր շինուածքով. անա իսկական Крѣпостное право-ն:

III

Պետրոս Մեծը հրատարակում է մի հրովարտակ, որով արգելում է գիւղացիների վաճառքը, բայց նոյն հրովարտակում գրում է. «Եթէ իսպառ չէ կարելի վերացնել այն սովորութիւնը, գէթ պահանջել, որ մարդկանց ծախին ամբողջ ընտանիքներով և ոչ թէ զատ-զատ, որ մի չտեսնուած բան է»: Փողի պակասութիւնից զրդուած՝ Պետրոս Մեծը ХОЛОП-ներին էլ դարձրեց հարկատու, իսկ իր անվերջ պատերազմների համար գինուորուհեանալու նպատակով՝ սրանց էլ ստիպեց ծառայել զօրքի շարքում: Այսպէս՝ КРЕСТЬЯНИН-ի և ХОЛОП-ի իրաւունքները հաւասարուեցին և հողատէրը սկսեց կամայ թէ անկամայ սխալեցնել իր ХОЛОП-ին իր գիւղացուց: Եւ երբ մեծ բեֆօրմատօրը հիմնեց մշտական կանոնաւոր-

գործ ու հարկաւոր կղաւ դրա համար դրամական միջոց, նա հրամայեց ժողովրդագրութիւն կազմել, որպէս զի հարկերը բաշխուեն բոլոր հպառակները վրայ, ի հարկէ բացի ազնուականներէն և հոգևոր սկաններէն, դարձեալ այս օրէնքով խօսքով և գիւղացին հաւատարմեցին իրանց իրաւունքների մէջ... հարկ տալու գործում:

Մենք տեսանք, որ հարկը տալիս էին մշակուող հողից. երբ գիւղացիները ուժասպառ կղան ու սկսեցին վարելահողերը պահպանեցնել, կառավարութիւնն էլ հարկը վերածեց ծուխի: Գիւղացիները սկսեցին մեծ ծուխերով ապրել, որ յիշեցնում էր բազմադամ հայ ծուխը, մինչև այժմ էլ գոյութիւն ունեցող մեր կրկրի խուլ անկիւններում: Այդ բանը նկատելով՝ ծխահարկը փոխեցին մարդաշնչի: Բայց մարդաշնչը մտցնելով՝ ինքը կառավարութիւնը, այսպէս ասած, սկսեց նկատել գիւղացուն առանց հողի, և քանի որ հողատէրն էր ըստ առաջնոյն նրա դատաւորը, ոստիկանը, նա էր պատասխանատու մարդաշնչի համար (յիշեցէք «Мертвья Душа», թէ ինչպէս ուրախացաւ Պիւռլինը Զիչիկովի առաջարկին՝ գնել մեռած ուղիները, որոնց հարկը ծանրացած էր Պիւռլինի վրայ), ապա մեծացրին և նրա իրաւունքները ևս առաւել: Մտայլ գոյներով է նկարագրում Պետրոս Մեծի ժամանակակից յայտնի Իվան Պոսոլովը — ուռսաց այդ Ադամ Սմիտը — գիւղացի-ճորտերի դրութիւնը. «Կարիքը ստիպում է գիւղացիներին փախչել. նրանցից ոմանք հաստատվում են Վօլգայի ափերին, ոմանք ապաստանում են Ուկրաինայում, ոմանք՝ սահմանից դուրս: Այդպիսով՝ նրանք շէն են դարձնում օտար երկիրներ, իսկ մեր հայրենիքը ամայանում է: Դառն խօսքերով և սակայն անօգուտ՝ աղերսում են գիւղացիները մեծ կայսրին. «Մեր քաջած տանջանքները Սօդոմ-Գոմօրում չեն կրել. քո բօյարները, իշխանները մեզ յօշոտում են՝ ինչպէս առիւծներ, կոխորդում թռնաւոր օձերի նման, թախվում մեզ վրայ կառաղի գայլերի պէս, ծեծում են մեզ այդ անողորմ Պիղատոսները: Խղճա՛, ողորմիր մեզ, մեր հայր թագաւոր»:

Բայց ու՛մ դէ՛մ էր այդ բողոքը. այն ազնուականները՝ դէ՛մ, որոնք կազմում էին տէրութեան սինը, նրա գործը, նրա հրամանատարները, նրա կառավարիչները, մինիստրները: «Ճորտատիրութիւնը» գնալով աւելի կատարեալ է դառնում. Պետրոս Մեծից յետոյ՝ 1730 թուին՝ ազնուականների ձեռքի տակ գիւղացիները զրկվում են անշարժ կալուածքներ գնելու իրաւունքից. 1741 թուին նրանցից այլ ևս հպատակութեան երդումն չէ պա-

հանջվում. 1761 թուին նրանց արգելվում է պետական կապալներ, подраба-ներ վերցնելը, մուրհակով պարտ վերցնելը: Միւս կողմից՝ 1747 թուին հողատէրերին իրաւունք է տրվում վաճառել գիւղացիներին՝ զինուոր տալու համար, 1760 թուին ազնուականը իրաւունք է ստանում իր գիւղացուն Սիբիր տաժաճկիր աշխատանքի ուղարկելու. վերջապէս 1746 թուին արգելվում է ոչ-ազնուականներին ունենալ ճորտեր:

Երբ գահ է բարձրանում Եկատերինէ Մեծը, էնցիկլոպեատիստ փիլիսոփաների այդ խոնարհ աշակերտուհին, Դերժավինի գովաբանած իմաստուն Ֆէլիցան, «ճորտատիրութիւնը հասնում է» իր գագաթնակէտին, աւելանում է և ազնուականների արտօնութիւնները:

Մինչև Եկատերինէն իսկապէս բոլորն էլ ճորտեր էին՝ և ազնուականները, և՛ գիւղացի-ճորտերը... տէրութեան առաջ: Ազնուականները պատժի սպառնալիքի տակ պարտաւոր էին ծառայել տէրութեանը, որի փոխարէն և արժեք էին նրանց գիւղացիներ: Եկատերինէն, որ գահ էր բարձրացել ազնուականների շնորհիւ, ազատեց նրանց այդ պարտաւոր ծառայութիւնից... առաջին մոռացաւ յետ վերցնել գիւղացիներին: Առաւել նա քաղմացեց իր պարգևներով ճորտերի թիւը, բախշելով իր սիրած պալատականներին արքունի գիւղացիներ՝ որպէս ճորտեր: Յայտնի պատմաբան Վասիլ Սիմեկսկին հաշուել է, որ իր փրեցեալներին Եկատերինէն գահ նստելուն պէս առաջին ամսուայ ընթացքում բռժանել է 18 հազար արքունի գիւղացիներ, դարձնելով նրանց ճորտեր, իսկ իր երկար թագաւորութեան միջոցին ընծայած ճորտերի թիւը մի միլիօնի է հասնում... Պաւէլ I, Եկատերինէի որդին, իր թագադրութեան օրը բաժանեց 100 միլիօն գեանատին հոգ և 100,000 հոգի... Այդ ընծայաբերութիւնները շարունակվում էին և յետոյ, թէև ոչ այդքան մեծ չափերով:

Այժմ հողատէր ազնուականը ճորտի տէրն ու տիրականն է. նա հետևում է նրա իւրաքանչիւր քայլին և նրա վիճակը, քաղղը կարգադրում ըստ իր հաճոյքի: Ես բերեմ մի քանի յայտարարութիւններ. 1797 թուի «Москов. Вѣд.»-ից.

«Ծախվում է մի լակէյ 25 տարեկան, իր կնոջով և երեխայով. լաւ շուրհակ է նոյնպէս, գիտէ անիւղ և արին բաց թողել. կինը կարող է լաւ աղախին լինել: Նոյն տեղը ծախվում է մի լաւ ֆայտօն ծանկացողները թող դիմեն այս ինչ հասցեով»:

«Ծախվում է 17 տարեկան տղայ. տեսնել կարելի է և

գնի մասին համաձայնեցել այսինչ տեղը: Մի ընտանիք — աղամարդը դերձակ՝ 45 տարեկան, կինը լուսացարար՝ 30 տարեկան, աղջիկը՝ 18 տարեկան՝ լաւ կրթութիւնով անող, և 5 տարեկան մի տղայ — ծախվում է 600 ռուբլով: Դիմել այսինչ տեղը:

«Ծախվում է տղամարդկանց և կանանց պարիկմախեր, բարձրահասակ և լաւ տեսքով, կարող է լինել կամերդիներ, լակէյ, սեզանապետ. 27 տարեկան, Նրա կինը, 24 տարեկան, սիրունատես, 3 տարեկան դուստրով: Վերջին գինն է 1000 ռ.»

«Ծախում են՝ 2 դերձակ, մի կոշիկաւոր, մի ժամագործ, խոնարար, կարէտ շինող, փորագրիչ, երկու կառապան: Նոյն տեղը ծախվում են 3 ջահել ձի, մի քանի թաղիներ: Դիմել այսինչ տեղը:

«Ծախվում է մի աղջիկ, որ լաւ քարգահ է անում: Նոյն տեղը ծախվում են աղամանդազարդ իրեղէններ: Եւ այլն և այլն...»

Երբեմնի ազատ գիւղացուն այժմ ազնուականը դարձնում է իր բակի սպասաւոր, նրանից կազմում իր дворян-ն, որ երբեմն հասնում էր մի քանի հարիւր հոգու. անգամ կային баринъ-ներ, որոնք, ընդհին 1000-ից աւել՝ դուռն ծառայողներ... Գիւղացու աղջիկները տիրուհու համար կրուժիկներ էին անում, քաթանեղէն գործում, իսկ ազատ ժամանակը գուարճացնում баринъ-ին կամ նրա դեռահաս ժառանգին: Այն դիօրօփօյին, որը շնորհ էր ցոյց տալիս, սովորեցնում էին արհեստներ, գիտութիւններ, և նա դառնում էր տիրոջ նկարիչը, ճարտարագետը, դերասանը և այլն: Հասկանալի է, թէ որքան ողբերգական էր ճորտ ինտելիգենտի դրութիւնը: Մեծամասնութիւնը վերջացնում էր իր կեանքը ինքնասպանութեամբ կամ արեւոցողութեամբ:

Ռուսաստանը այս օրերս մօտեց մալօրօս մեծ բանաստեղծ Շելլինսկոյի մահուան 50-ամեակը, որ նոյնպէս ճորտ էր և որին ազատելու համար հարկաւոր եղաւ պալատական բանաստեղծ Ժուկովսկիի միջամտութիւնը...

Ճորտութիւնը դառնում է այն պատուանդանը, որի վրայ կառուցվում է Եկատերինէի և նրա յետնորդների շրջանի շատ ցուցիչ փարթաւութիւնը, որի նկարագրելը կը պահանջէր մի քանի տասնեակ հատորներ: Այժմեան Տաւրիկեան պալատում, որ Եկատերինէն նուիրել էր իր սիրական Պատեռնիկին, վերջինս ցանկացաւ խնջոյք սարքել. խնջոյքին պիտի այցելէր ինքը կայսրուհին: Ամառ էր, իսկ կայսրուհին ցանկացել էր

սահնակով դալ: Եւ անա պալատից մինչև Տաւրիկեան պալատը Պատեռնիկինի հրամանով աւազ է փռվում, և կայսրուհին իսկ որ սահնակով է գալիս: Այդ բալի լուսաւորութիւնը միայն նստում է 70,000 ռուբլի... Եւ ինչ վարմանը, թէ Պատեռնիկինի ականահուռ մուկիքը արժէր մէկ միլիօն ռուբլուց աւել:

Անշուշտ ճորտատէրերը մէկ-մէկ աւազակներ չէին հռչակաւոր Մալտիպիլայի նման, կամ այն ազնուականի նման, որ գեղջկուհիներին հրամայում էր սնուցանել իրանց կաթով իր թագիկներին. բայց միթէ «Մոսկով» մէջ նկարագրուած մեղմ տիրուհին քիչ էր դժբախտացնում իր ճորտին:

Ճորտերի սրտում միշտ վառ էր այն միտքը, որ իրանց չարչարողները ազնուականներն են հակառակ թագաւորի կամքին, որ նա հրամայել է ազատել իրանց. միայն թէ ազատութեան ոսկէ հրովարտակը գողացել են և պահվում է ազնուականների մօտ: Այդ հաւատը կենդանի էր և այն ժամանակ, երբ եկեղեցիներում կարդացվում էր բարձրագոյն հրովարտակը (XVIII դարում), որով տաժանակիր աշխատանքներ էր սպառնում նրանց, որոնք կը համարձակուեն գանգատ բերել իրանց տիրոջ վրայ:



IV

Ճորտատիրութեան ծաղկման դարն եղաւ և նրա անկման առաջին յայտարարը: Որքան էլ պօմէշիկները գոհ լինէին և յղիանային, բայց ճորտութիւնը իր հակացոյց, թարս երեսով ծանրանում էր ոչ միայն գիւղացիների, այլ և ամբողջ ռուսական կեանքի վրայ, նոյն իսկ իրանց պօմէշիկների, կալուածատէրերի վրայ: Ռուսաստանը ամեն բանի մէջ յետ էր մնացել միւս պետութիւններից: Ռուսաստանում գրագէտների և կրթեալ մարդկանց թիւը շատ քիչ էր. շատ քիչ էր արհեստ իմացողների թիւը. չկային ֆաբրիկաներ, գործարաններ: Եւ դրա պատճառը շատ հասկանալի էր: Ո՞վ պէտք է զբաղուէր արհեստներով և գիտութիւններով: Գիւղացիները ճնշուած, ճզմուած էին աշխատութեան ներքոյ և ոչ մի իրաւունք չունէին. հետեաբար ինչ սիրտ էր մնում նրանց մէջ զբաղուելու արհեստներով և գիտութեամբ, հողատէրերը այնպէս ընտելացած էին պարապու-

15878-58
(1912)

Թեան, որ ընդունակ չէին ոչ մի գործի: 2¹ որ մանկութանից նրանց սովորեցնում էին, թէ չպէտք է ոչ մի բանի ձեռք տալ, չպէտք է աշխատել. ամեն բան նրանց համար անում էին ծառաները. բարինը կամ ազան չէր կարողանում ինքը լուացուել, չէր կարողանում գետնից վերցնել նոյն իսկ իր ընկած թաշկիտակը, չէր կարողանում ինքը ոչ հագնել և ոչ էլ հանել շորերը և առհասարակ չէր կարողանում առանց սպասաւորի որեէ մի բայլ անել, այդպիսի մարդը կարող էր աշխատաւոր լինել:

Այնու ամենայնիւ գրացի երկիրների կեանքը գործում էր իր ազդեցութիւնը Ռուսաստանի վրայ և ինքը կեանքը խօսում էր ընդդէմ ճորտական իրաւունքի: Եւրոպայից սկսեցին բերել այնտեղի ֆաբրիկաներում և գործարաններում պատրաստուած իրեր, որոնք չտեսնուած նորութիւն էին ռուսների համար. Իրանք ռուսները սկսեցին գնալ Եւրոպա, ապրել այնտեղ և վերադառնալով պատմել, թէ ինչպէս են ապրում արտասահմանում մարդիկ: Ինչ-քիչ կեանքը սկսեց փոխուել. ուսեալ մարդկանց թիւը աւելացաւ, սկսեցին հիմնուել ֆաբրիկաներ, գործարաններ. բայց ֆաբրիկային արտագրութիւնը Ռուսաստանում չէր կարող լայն ծաւալ ստանալ, բանի որ գոյութիւն ունէր ճորտութիւնը, որովհետեւ աշխատողներ, բանուորներ չկային: Ռուսաստանում չորս մարդուց մինը ճորտ էր. պոմէշչիկները ուղարկում էին իրանց ճորտերին աշխատելու ֆաբրիկաներում և իրանք էին վերցնում նրանց վաստակը. բայց միթէ տանջուած, հիւժուած մարդիկ կարող էին աշխատել, այն եւ ոչ իրանց համար, երբ միւս կողմից էլ պէտք է մշակէին իրանց հողերը: Այս գրագէտ մարդկանց պակասութիւնը սաստիկ զգալի էր լինում: Պոմէշչիկները գրագիտութիւն չէին սովորեցնում իրանց ճորտերին. գիւղերում գպրոցներ չկային, միայն, իբրեւ բացառութիւն, մի քանի բարի պոմէշչիկներ գպրոց էին պահում իրանց գիւղում: Այդպիսի խորին և թանձր տգիտութեան մէջ ապրել այլ եւ անհնարին էր:

Բոլոր կրթուած, ազնիւ և լաւագոյն մարդիկ Ռուսաստանում վաղուց բոլոր էին բարձրացրել ճորտութեան դէմ. XV^{III} դարի վերջի և X^{IX} դարի սկզբի բոլոր ռուս գրողները սկսել էին ճորտութեան դէմ խօսել իրանց գրքերի մէջ և ապացուցանել, թէ պէտք է ոչնչացնել ճորտութիւնը: Այդ գրողների մէջ առաջին տեղն է բռնում Եկատերինէ Ա կայսրուհու թագաւորութեան ժամանակ ռուս գրող Ալէքսանդր Նիկոլայեւիչ Տադիշչեւ, որ իր «Ռեդեմպտիւն Պետերբուրգից Մոսկւա» աշ-



Ա. Ն. Բադիչեւի
(1749—1802)

խատութեան մէջ վառ գոյներով պատկերացրեց ճորտերի զարհուրելի դրութիւնը և շատ պարզ կերպով շօշափեց այն միտքը, թէ ռուս սարուկները պէտք է դառնան ազատ քաղաքացիներ, և ազատուած գիւղացին պէտք է դառնայ իր մշակած հողի սեպհականատէրը:

Բացի Բադիշչեւից, Եկատերինէ Ա-ի թագաւորութեան ժամանակ, մի այլ գրող և հասարական գործիչ՝ Նիկ. Իվ. Նովիկով (1744—1818), մի ազնիւ, մաքուր և բռնկուող հոգի, իր խմբով հանդէս եկաւ ճորտութեան դէմ: Դարձեալ այդ ժա-

մանակ ռուս գրող Փօնովիդինը իր նշանաւոր «Նեդոբուս» կօմէդիայով, ուր նկարագրուած է ճորտական իրաւունքը և կենցաղը, հարուածեց այդ իրաւունքը, նկարագրելով ճորտութիւնը ծաղրական և այլանդակ կերպարանքով և դրանով ցոյց տալով նրա ֆրասակարութիւնը:

Դժբախտաբար վրայ հասաւ ֆրանսիական մեծ յեղափոխութիւնը, որ սաստիկ վախեցրեց Եկատերինէ Ա-ին, և Բադիշչեւ ու Նովիկով՝ և սրանց համախոհները իրանց բարոյզութեան համար բանտարկուեցին և արսորուեցին. լոյս և գրականութիւնը:

Պաւլ I կայսրի ժամանակը, ի հարկէ, չէր կարող նպաստել ազատագրական շարժմանը, բայց նրա յաջորդ Ալէքսանդր I կայսրի օրով մի քանի փորձեր եղան՝ թշուառ ճորտերի վիճակը թեթեւցնելու, ուստի և յոյսերը վերակենդանացան: Կայսր Ալէքսանդր I ճորտութեան իրաւունքի մասին ասաց. «Ես ուխտ եմ արել չաւելացնել այդ թշուառների թիւը և կանոն եմ դրել ինձ համար ոչ ոքի սեպհականութիւն չտալ գիւղացիներին»:

Նա 1801 թուին թոյլատրեց բոլոր դասակարգերին (ռեբինն և գիւղացիներին, ճորտերին) ձեռք բերել հողային սեպհականութիւն: Կոմս Պ. Դ. Կիսելեւի ազդեցութեան ներքոյ, Ալէքսանդր I-ը 1813 թ. հրատարակեց «ազատ հողագործների օրէնքը», որի զօրութեամբ թոյլատրվում էր ազատել գիւղացի-

ներին: Սակայն գիւղացիներին ազատել ցանկացողների թիւը շատ քիչ եղաւ: Կային ցանկացողներ՝ ազատելու ճորտերին առանց հողի, իսկ առանց հողի ազատել ճորտերին՝ կը նշանակէր մատնել նրանց սովմամբ լինելու:

Թէ Ալբէսանդր I-ի օրով և թէ նրա մահից յետոյ՝ նիկօլայ I կայսրի թագաւորութեան սկզբում ազատասէր երիտասարդութիւնը շատացաւ, այդ բանին շատ նպաստեցին և նպաստեցին պատերազմները, երբ բազմաթիւ ռուս երիտասարդ ազնւական սպաներ Եւրոպա գնալով՝ իւրացրին եւրոպական ազատ մտածողութիւնը: Այդ երիտասարդները, վերադառնալով հայրենիք, կազմեցին ղեկումբերեան կամ ղեկաւորիստ կոչուած խումբը, որ առաջ բերեց 1825 թ. դեկտ. 14-ի շարժումը, որի նպատակն էր փոխել Ռուսաստանում միահեծան կառավարութիւնը և ազատել գիւղացիներին ճորտութիւնից:



Պաւլ Իվ. Պեսեկ
(1792—1826)



Իվ. Վ. Մակուսկին
(1797—1837)

Դեկաբրիստների մեծ մասը (Պ. Իվ. Պեսեկ, Բեստիւմեով-Րիւմին, Րիլէեկ, Նալուչկին և այլք) սերում էին հարուստ զինուորական երիտասարդութիւնից. նրանք անձնապէս իրանց համար ոչ մի շահի չէին ձգտում, այլ նրանց ոգևորողն էր հայրենիքին ծառայելու վեհ գաղափարը: Այդ խումբը իր այդ վեհ գաղափարների համար հալածուեց, արքայութեան և նոյն իսկ մահուան դատապարտուեց: Բայց դեկաբրիստների ազդեցութիւնը այնքան մեծ եղաւ ռուս հասարակութեան վրայ թէ այն ժամանակ և թէ ապա, նրանց մահից յետոյ, որ նրանց գաղափար-

ներն անցան սերնդից սերունդ:

Դեկտեմբերի 14-ի անցքը, ապա 1830 թ. լենական շարժումը աւելի ուժեղացրին բէակցիւն, և ազատասէր գրողները ենթարկուեցին հալածանքի, արքայի ու բանտարկութեան: Գրիբօյեդովի «Խեթից պատուհաս» կոմէդիան միայն ձեռագրերով էր շրջանառութիւն անում Ռուսաստանում:

Սակայն կեանքը և նրա արտայայտիչ գրականութիւնը առաջ էր տանում իր արշաւանքը: Դեկաբրիստներից յետոյ հանդէս եկաւ. արեւմտականների («западники») խումբը, որին պատկանում էին Վ. Բէլինսկին, Տ. Գրանովսկին, Ա. Զերցէնը և այլք: Արեւմտականներին անմիջապէս յարում էր և Պետրաշևիսկիի ազատագրական խումբը, որ ապրում էր XIX դարի 40-ական թուականներին:



Սելեմանը Հեցլեկ
(1812—1870)



Մ. Վ. Պետրաշևիսկի
(1819—1867)

Արեւմտականների հետ միասին ճորտութեան դէմ դուրս եկաւ և ռուս մտքի մի այլ բանակը, սլավոնօֆիլների բանակը, որ թէև պաշտպանում էր ռուսական կեանքի հիմունքի ինքնուրոյութիւնը և զգուշացնում էր ռուս ժողովուրդը եւրոպական կուլտուրայի հիմունքը իւրացնելուց, բայց նա ևս ընդդէմ էր ճորտութեան: Իսկ արեւմտականները, ապացուցանելով որ անհրաժեշտ է Ռուսաստանին իւրացնել եւրոպական կուլտուրայի կանօնները, ցոյց էին տալիս, որ պէտք է ամենից առաջ ջնջել ճորտութիւնը, իբրև մի պայման՝ առանց որի անհնարին է Ռուսաստանի կուլտուրական մերձեցումը Եւրոպայի հետ:

Նոյնը քարոզում էին և «պետրաշեվցիները», այն է՝ Պետրաշեվսկի-Բուտաշեվիչի խմբի անդամները, ուրբաթ օրերը հաւաքվում էին Պետրաշեվսկի տանը երիտասարդ, կրթեալ, ընթերցասէր, մտածող մարդիկ և քննադատում, խօսում, ամեն մի անարդարութիւն, զեղծում, ճշունք և բռնութիւն խորապէս յուզում էր ամեն մէկի հոգին, իսկ ամէն մի ձգտում ղէպի հասարակական բարիքը՝ համակրութիւն էր առաջ բերում նրանց մէջ։ Եւ որպիսի հետաքրքրութեամբ նրանք հետևում էին և Արևմուտքում կատարուող ղէպերին։ Եւ, ի հարկէ, այդ խմբի մէջ ամենակենդանի արձագանք էին գտնում ճորտութեան սարսափները և ժողովրդական կարիքը։

Նոյնպիսի ազատագրական բնաւորութիւն էր կրում և Ալեքսանդր Հերցէնի կամ Իսկանդրի գրական ամբողջ գործունէութիւնը։ Դեռ երեխայ ժամանակ Հերցէնը իր հօր տան մէջ իմացաւ ճորտերի կեանքի գաղտնիքը, նա դեռ պատանի հասակից հասկացաւ, շփուելով ճորտ երեխաների հետ գիւղում, որ ըստբունկների կրճքում ևս բաբախում է նոյն մարդկային սիրտը։ Նրանց իրաւագործի գոյութեան զարհուրանքը խորապէս տպաւորուեց նրա զգայուն հոգու մէջ։ Եւ նա ուխտ արեց աշխատել այդ սոսկալի դրութեան ջնջման։ Եւ ահա մենք տեսնում ենք այդ տաղանդաւոր գրողին, որ իր ազատ մտքերի համար ստիպուած էր փախչել արտասահման և այդտեղ հրատարակում էր «КОЛОКОЛО» (Հնչակ) անունով մի ամսագիր։ Ամբողջ իր կեանքը նուիրած՝ ազատագրական գործին, նա իր հնչակով կոչ էր անում բոլոր զգայուն սրտերին՝ ջնջել ստրկութեան նախատինքը։

Բայց ճորտութեան ջնջման գլխաւոր սատարողները կամ գիւղացիական ազատագրութեան հոգեւոր հայրերն եղան ռուսաց գրականութեան բոլոր ղէմքերը XVIII և XIX դարերում՝ Յոնվիդին, Լերմոնով, Պուշկին, Գոգոլ, Տուրգենիւ, Նեկրասով, Դոնչարով, Բելինսկի, Գրիգորովիչ, Դոբրոլիւբով և Զերնիշեվսկի։

Բոլոր այդ նշանաւոր գրողները, բանաստեղծները գրում էին ճորտական իրաւունքի մասին, նրանք նկարագրում էին իրանց արտայայտութիւնների մէջ ճորտերին՝ ինչպէս իսկական մարդկանց, մի բան, որ շատ մեծ նշանակութիւն ունէր այն ժամանակուայ համար, որովհետեւ ճորտերին մարդ չէին համարում։ Նրանք պատկերացնում էին ճորտերի հոգին, նրանց զգացումները, մտքերը, ցանկութիւնները, նկարագրում էին նրանց մէջ եղած համակրելի և բարի մարդկանց, և այդ արտայայտութիւնների ընթերցողները կամայ ազամայ տողորվում էին համակրութեամբ ղէպի ճորտերը, ատելութեամբ՝ ղէպի ճորտական

իրաւունքը և ցանկութեամբ՝ շուտով ջնջելու այդ ստրկութիւնը։ Պուշկինը գրում էր, որպէս թէ կոչ անելով ծարին. «Արդեօք կը տեսնեմ երբեք ժողովուրդը ազատուած և ստրկութիւնը՝ տապալուած ծարի մի նշանով»։ Նեկրասովի բոլոր ոտանաւոր-

ԳԻՐԿԱՅԻՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՀՈԳԵՒՈՐ ՀԱՅՐԵՐԸ



Եկեհիս Լվ. Փոմոլիկին
(1745—1792)



Միխ. Լվ. Լեւոսով
(1815—1841)



Մ. Ս. Պուշկին
(1799—1837)



Նիկ. Վ. Գոգոլ
(1809—1852)



Իվ. Մ. Տուրգենևի
(1818—1883)



Նիկ. Ա. Նեկրասով
(1821—1877)



Իվ. Ա. Գոնչարով
(1814—1891)




Ա. Ա. Գուրգ. Ալեկսևսկի
(1810—1848)

ները համակուած են խորին սիրով դէպի հարստահարուած ժողովուրդը. նա ինքը մեծացած լինելով պոմէշչիկների շրջանում՝ ատում էր սրտանց նրանց կամայականութիւնը, ուստի և իր գեղեցիկ բանաստեղծութիւնների մէջ կոչէր անում ուրիշներին ևս ատել այդ կազմը, ուր շնչուած և շողովողներն ստրուկների



Դիմ. Ա. Ա. Գրիգորովիչ
(1822—1899)



Նիկ. Ա. Գորբուխով
(1836—1861)

երամը նախանձում էր աղայի վերջին շների կեանքին. Նեկրասովը կարողացաւ թափանցել մութիկի կեանքի գրեթէ բոլոր խորշերը և նրա ոտանաւորների մէջ ցոլանում է «անյատակ վշտի վտակը, որ հոսում է ամբողջ ճորտական Ռուսաստանով»։ Մի ուրիշ գրող՝ Գրիգորովիչ, որ առաջինը խոշոր բնկետրիստ գեղարուեստագէտներից՝ շօշափեց գիւղացիական կենցաղը, ծանօթացրեց հասարակութեանը շինական և ճորտային կեանքի հետ իր «Դիւղ» (Деревня), «Անտոն վալային» (Антонъ Горемыка) և այլ վէպիկներով։



Նիկ. Դավ. Զեբնիսկովի
(1828—1889)

Բայց մանաւանդ մեծ է Տուրգենևի մատուցած ծառայութիւնը ազատադուծեան գործին։ Նա իր «Որսորդի յիշատակագրեր» (Записки Охотника), «Մումու» (Муму) և այլ աշխատութիւններով վառ գոյններով նկարագրեց գիւղը, հասարակ ժողովուրդը և ցոյց տուեց, որ ճորտերը դուրս են, տանջվում, սիրում, ատում նոյնպէս, երբեմն նոյն իսկ աւելի խորա-

պէս, քան աղաները. գիւղացիներին հետ միասին նա նկարագրել է և պօմէշիկներին՝ հողատէրերին, որոնք քէյֆ են անում, շուայտ, գեղի և անառակ կեանք վարում և անընդունակ են որևէ աշխատութեան. Համեմատութիւնը ճորտերի և պօմէշիկների միջև՝ փայլուն կերպով երևան է հանում ճորտական իրաւունքի բոլոր այլանդակութիւնը: Այդ գրուածքները խորունկ տպաւորութիւնը էին թողնում ընթերցողների վրայ, որոնց թւում գրտնվում էր և ապագայ Յարը, գահաժառանգ Ալէքսանդր Նիկօլայիւիչը:

Բելինսկին, 40-ական թուականների գրող-քննադատ, ինչպէս և Դոբրոլիւբովը իրանց ամբողջ կեանքը նուիրեցին կուլիւրնդէմ ճորտութեան, գրականութեան մէջ. նրանց համար գիւղացիների ազատագրութիւնը նուիրական ուխտ էր, որ նրանք մեռնելիս կտակեցին իրանց բարեկամներին գրուի բերել:

Բոլոր այդ գրողները իրանց գրքերով արծարծում էին առաջաւոր և լատագոյն մարդկանց մէջ ձգտումն ազատելու հայրենիքը ստրկութեան շղթայից: Նրանց ջերմ, համոզուած խօսքերը, նրանց ստեղծած գեղարուեստական պատկերները զուր չէին անցնում, այլ ստիպում էին մտածել այդ հարցի մասին բոլոր նրանց, որոնց մէջ խղճմտանքը դեռ բոլորովին չէր թրմւել: Այդ գրողների ազդեցութեան տակ նոյն իսկ կառավարող, բարձր շրջանները սկսեցին մի քանի պալիտով միջոցներ ձեռք առնել՝ ճորտերի գրութիւնը ամոքելու համար: Օրինակ, կոմս Պ. Կիսելիով, որի մասին խօսեցինք վերևում, իբրև պետական կալուածների մինիստր, անցկացրեց մի ըէֆօրմ Նիկօլայ I կայսրի օրով, որ բարւոքեց պետական գիւղացիների գրութիւնը, և բացի գրանից իր ամբողջ կեանքում աշխատեց գիւղացիների ազատութեան համար՝ ի լրումն «ազատ գիւղացիների մասին օրէնքի»:

Նիկօլայ I կայսրը հրատարակեց մի նոր «օրէնք պարտաւորիչ գիւղացիների մասին», որ չէր թոյլատրում ազատել գիւղացիներին առանց հողի, իսկ հողի համար գիւղացիները պարտաւոր էին պայմանագրով հատուցանել կամ աշխատութեամբ և կամ գրամով, այսինքն ճորտութեան տեղ բեգառ, տուրք տալ: Գիտակցելով որ «ճորտութիւնը չարիք է», Նիկօլայ I-ը սկսեց պատրաստել յաջորդական անցումն դէպի իրերի մի ուրիշ կարգ և շնորհիւ կոմս Կիսելիովի՝ նրա օրով գոնէ պետական գիւղացիները հողային կազմութիւն ստացան: Ապա 1841 թ. Նիկօլայ I արգելեց ծախել գիւղացիներին հատահատ, այսինքն կարելի էր ծախել միայն ընտանիքով և ոչ բաժանել մարդը կնոջից:

կամ ծնողները՝ և բեխաներից: Նոյնպէս իրաւունք տրուեց պետական կալուածների մինիստրին գնել ազնուականների կալուածները՝ աճուրդով, և այդպիսի հողերի վրայ եղած ճորտերին թոյլատրվում էր վերագնել իրանց ազատութիւնը:

Եւ այսպէս՝ XIX դարի առաջին կիսում ռուս հասարակութեան առաջադէմ տարրերը համակուած էին անկեղծօրէն ազատագրական ձգտումներով: Պէտք է ասել, որ նրանց քարոզները՝ ջնջել ճորտութիւնը՝ հասնում էին և գիւղացիների ականջին, ուստի և գիւղացիական յուզմունքները, խռովութիւնները անպակաս էին: Գիւղացիները զգում էին, որ մօտ է իրանց ազատութեան ժամը. պօմէշիկները զայրանում էին, և թէև տեսնում էին, որ ճորտութեան օրերը համրուած են, բայց դարձեալ զարհուրում էին այդ մտքից: Նրանց թւում էր, որ եթէ ջնջուի ճորտութիւնը, աշխարհումս ամեն բան տակն ու վրայ կը լինի և այլ ևս անկարելի կը լինի ապրել, ուստի և ամեն կերպ աշխատում էին թոյլ չտալ, որպէսզի գիւղացիների մէջ տարածուեն լուրեր ճորտութեան ջնջման մասին: Խօսում էին ճորտութեան ջնջման ծրագիրների մասին միայն շշուկներով, որ չլինի թէ ճորտերը լսեն: Եւ եթէ գտնվում էր մի պօմէշիկ, որ ցանկութիւն էր յայտնում ազատել իր ճորտերին, ինչպէս՝ օրինակ՝ երիտասարդ ռուսեալ պօմէշիկ Եակուշկինը, նրան համարում էին խելագար:

Բայց յոյսերը օրէ-ցօր զօրանում էին. ճորտերը ապրում էին յոյսով՝ շուտով իրանց ազատ տեսնելու, երբ յանկարծ մի նոր դէպք եկաւ խորտակելու այդ բոլոր յոյսերը, և սկսուեց մի նոր սոսկալի ըէակցիա: Այդ դէպքը 1848 թ. համաեւրօպական յեղափոխութիւնն էր, որից զարհուրած՝ Նիկօլայ I կայսրի կառավարութիւնը սկսեց սարսափելի հալածանք ազատագրական ձգտումների և նրանց արտայայտողների դէմ: Պետրաշեվցիներէց ինքը՝ Պետրաշեվսկին, նշանաւոր վիպասան Դաստիսկին և Ախշարումովը (հայ ծագումով, որ մի քանի ժամանակ սրանից առաջ վախճանուեց և որ նոյնպէս գործում էր յօգուտ ազատագրութեան), դատապարտուեցին կախաղանի, բայց յետոյ ներումն ստանալով՝ աքսոր ուղարկուեցին. փակուեցին ամսագրերը, Գահմանափակուեց համալսարանների ուսանողների թիւը և տիրեց գերեզմանային լուրթիւն. մոռացուեցին նոյն իսկ Նիկօլայ I-ի ծրագրած թեթև ըէֆօրմները:

Սակայն, ինչպէս բնութեան մէջ յաճախ պէտք են լինում, օդը թարմացնելու համար, որոտումներ, փայլակ և կայծակ, նոյնը պէտք է լինում և հասարակական կեանքի մէջ. և այդպիսի-

սի որոտումն Ռուսաստանի համար հանդիսացաւ Ղրիմի պատե-
րազմը, 1853 թ., որ եկաւ մերկացնելու հասարակութեան ա-
ռաջ պետութեան բոլոր խոցերը: Այդ պատերազմը ցոյց տուեց
այն խոր վիճը, որի գլխին կանգնած էր Ռուսաստանը շնորհիւ
ճորտութեան. նա ցոյց տուեց, թէ երկիրը ամեն բանի մէջ որ-
քան յետ էր մնացել Եւրոպայից. չկային ոչ երկաթուղիներ, ոչ
հեռագիր. զինուորները հագուած էին վատ, կերակրվում էին
վատ, ճնշուած էին իրանց հետ ունեցած կոպիտ վարմունքով:
Պատերազմը անաջող ելք ունեցաւ Ռուսաստանի համար. Մե-
վաստօպօլն առնուեց, ուսական նաւատորմը ծովասույգ եղաւ:

Մի խօսքով՝ չկար պետութիւն ժամանակակից մտքով,
այլ երկու բաժան-բաժան մասեր—ճորտատէրեր և ընկղմուած
գիւղացիներ, ճորտեր: Այդ զգաց կառավարութիւնը, զգաց և
Նիկօլայ I կայսրը, որ վախճանուեց պատերազմի վերջում և իր
թագաժառանգին ասաց մեռնելիս. «Քեզ եմ յանձնում իմ կօ-
մանդան, բայց անկարգ ձեռով»:

Դա՛ն բարձրացաւ Ալէքսանդր II, որին և վիճակուած էր
պիտի բերել մեծ ըէֆօրմն ու ջնջել ճորտութիւնը:

V

Ղրիմի պատերազմի անաջողութիւնը, ինչպէս ասացինք,
ցոյց տուեց, որ անհրաժեշտ է առանց մի րօպէ յետաձգելու
խոշոր բարենորոգութիւններ կատարել և ամենից առաջ վերջ
դնել ճորտութեան ամօթալի դրութեան:

Բարձրանալով գահ 1855 թ. փետրուարի 19-ին, Ալէքսանդր
II կայսրը, պէտք է ասել, շատ էլ չէր պատրաստուած և տրա-
մադիր չէր վերանորոգչի դեր կատարելու: Պալատական շրջան-
ներում նա, թագաժառանգ եղած ժամանակ, յայտնի էր իբրեւ
ոչ համակրող ճորտութեան ջնջման գաղափարին: Թէև նա ա-
շակերտն էր նշանաւոր բանաստեղծ Ժուկովսկիի, որ իր ժամա-
նակին աշխատել էր ներշնչել նրա մէջ մարդասիրական սկզբ-
բունքներ, բայց և միևնոյն ժամանակ որդին էր իր հօր՝ Նիկօլայ
I-ի, որի յետադիմական քաղաքականութեանը նա համակրում էր
մինչև 1854 թիւը: Բայց գահ բարձրանալով՝ Ալէքսանդր II
կտրուկ կերպով փոխեց իր հայեացքը և իր տրամադրութիւնը:

Նա ըմբռնեց և գիտակցեց, որ ոչ միայն մարդասիրական սկզբ-
բունքների և զգացումների համար, այլ և պետական նկատու-
ներով պէտք է զիջել պատմական պրօցէսսի անդիմադրելի ոյ-
ժին, ուստի և վճռեց անպատճառ գլուխ բերել ճորտութեան
ջնջման ըէֆօրմը: Եւ մի անգամ վճռելով, նա արդէն մնաց ան-
խախտելի իր համոզման մէջ և սկսեց տոկունութեամբ, բայց
զգուշութեամբ առաջ քշել իր ծրագիրը: Նա աշխատեց իրանց
ազնուականներին, պոմէշչիկներին համոզել այդ ըէֆօրմի ան-
հրաժեշտութեան մէջ: Նշանաւոր են այն խօսքերը, որ նա
արտասանեց Մօսկվայում 1856 թ., ուղղուած ազնուականներին.
«Լուրեր են պտտում, թէ ես կամենում եմ յայտարարել գիւ-
ղացիների ազատութիւնը. դա ճիշտ չէ. և այդ պատճառով ե-
ղել են մի քանի անկարգութիւններ, գիւղացիների կողմից: Սա-
կայն ես չեմ ասել նոյնպէս, թէ զրա դէմ եմ եւ: Մենք ապրում
ենք մի այնպիսի դարում, որ ժամանակով դա էլ պէտք է լի-
նի. հարժում եմ, որ դուք էլ համամիտ էք ինձ, հետևաբար
անհամեմատ աւելի լաւ կը լինի, եթէ դա պատահէ վերևից,
քան ներքևից: Եւ այսպէս՝ նա զգուշութեամբ յայտնեց հողա-
տէրերին իր կամքը, թէ աւելի լաւ է ազատել գիւղացիներին
վերևից, չսպասելով որ նրանց ազատեն ներքևից:

Այս յայտարարութեան վրայ պոմէշչիկները յուզուեցին,
խսկ գիւղացիների ազատութեան կողմնակիցները սաստիկ ու-
րախացան. բայց ճորտութեան պաշտպանները աշխատեցին ա-
մեն կերպ խափանել գործը: Կայսրը ինդրեց բոլոր ազնուա-
կաններին յայտնել իրանց կարծիքները գիւղացիների ազա-
տութեան առիթով: Յօգուտ ազատութեան ամենից առաջ կար-
ծիք յայտնեցին Տվէրի ազնուականները:

Ալէքսանդր II սկզբում հաստատեց «գաղանի կօմիտէտ»,
իր հօր՝ Նիկօլայ I-ի նման. այդ կօմիտէտը պէտք է բարեւոքէր
գիւղացիների դրութիւնը. բայց նրա անդամները բոլորն էլ
ճորտական իրաւունքի կողմնակից էին և աշխատում էին ա-
զատել գիւղացուն առանց հողի: Այդ կօմիտէտը սակայն երկար
չդիմացաւ. արդէն յայտնի համարձակ և կայսրի թոյլտուութեամբ
ազատագրութեան գործի համար աշխատում էին թարմ ոյժեր,
գործունեայ, համարձակ մարդիկ, ուստի և «գաղանի կօմիտէ-
տի» զբաղմունքները ակամայ դադանեցին գաղանի լինել. այդ
զբաղմունքներն ենթարկվում էին հասարակական դատաստանին:
Մի խումբ մարդիկ, որոնք նուիրուած էին գիւղացիներին ազա-
տելու գաղափարին, շրջապատեցին կայսրին և սկսեցին ազդել
նրա վրայ և իրանց ճառերով բորբոքել նրա ցանկութիւնները:

կայծր և դարձնել մի մեծ հրդեհ: Այլևս ճորտատերերի դան-
դատները, տրտունջները չէին կարողանում շարժել կայսրի սիր-
տը, և ազնուականները հասկացան, թէ հասնել է ժամանակը՝
կատարելու կայսրի կամքը, ուստի նրանք սկսեցին ամեն տեղ
նահանգական կոմիտեաներ կազմել և քննել այն հարցը, թէ
ինչպէս ազատել գիւղացիներին, հողով թէ առանց հողի:

Շուտով «զադանի կոմիտե» տեղ հաստատուեց գլխա-
ւոր կոմիտէտ, որի նախագահ նշանակուեց Բոստովցեմ և նրա
օգնական՝ Նիկոլայ Միլիտին:

1857 թ. դեկտեմբերի 28-ին Մոսկվայում, վաճառական-
ների ժողովի դահլիճներում, հաւաքուեցին մօտ 180 հոգի գիտ-
նականներ, գրողներ, պրօֆէսորներ և այլ գործիչներ: Այդտեղ
հացիկերոյթի ժամանակ կրակոտ ճառեր արտասանուեցին, բա-
ժակներ առաջարկուեցին կայսրի կենացը. շատերը լաց էին լի-
նում ուրախութիւնից: Պետերբուրգի համալսարանի պրօֆէսոր
Կովիլինը իր բաժակաճառի մէջ ասաց. «Յոյս ունենանք, որ
ազնուականութիւնը ընդունակ կը հանդիսանայ քննել գործերը
ոչ միայն մասնաւոր շահերի, այլ և ընդհանուր-ժողովրդական
օգտի տեսակէտից. ով ունի իրաւունք և իշխանութիւն, նա
պատասխանատու է իր գործողութիւնների համար առաջի
Աստուծոյ, հայրենիքի և պատմութեան»: Մի վաճառական՝ Կո-
կորեմ ասաց. «22 միլիօն մարդկանց համար ծագում է քաղաքա-
ցիական հաւասար-իրաւունքի արշալոյսը: Լինենք անկեղծ և




Լեւի Մամարիկ
(1819—1876)



Իւլի Մ. Մ. Չեկոսովի
(1821—1878)

պարզ՝ մեր հայրենիքի այսպիսի մեծ դէպքերի ժամանակ՝ և իւ-
սկեք ճշմարտութիւնը: 25-ը որ բոլոր մեր գրամատուցները
կազմուել են գլխաւորապէս գիւղացիներից... Որպիսի գեղե-
ցիկ ասիթ՝ երախտահատոյց լինելու գիւղացիներին մեզ տրուած
հարստութեան համար:

Այդպէս էին խօսում Ռուսաստանի լաւագոյն մարդիկ:
Այդ գէպքերի ազդեցութեան ներքոյ կենդանացան լրագրիւնները,
գրականութիւնը: Ռուսաստանի բոլոր անկիւններում քննվում
էին նոյն խնդիրները, որոնք արծարծվում և քննվում էին նա-
հանգական կոմիտեաներում, իսկ այդ կոմիտեաները ցանցի
պէս ծածկեցին ամբողջ Ռուսաստանը: Ինքը գիւղացիական մեծ
զանգուածը, որ ամենից անձկութեամբ սպասում էր երանաւէտ
օրուան, մնում էր սակայն լուռ և մուռն, ընկղմուած լինե-
լով խորին տգիտութեան մէջ: Ուսում և գործում, ծրագիր-
ներ էր յղանում ուրի հասարակութեան գիտակից մասը—
գրողները, գրականագէտները, գիտնականները և ինտելիգենտ
գործիչները. կազմվում էին ակումբներ. մարդիկ, որոնք հա-
մաժիտ էին, թէ գիւղական ժողովուրդը պէտք է ազատուի, և
տարբերվում էին սակայն իրանց հայեացքներով այն մասին,
թէ ինչ եղանակով կատարել այդ ազատութիւնը, քննում, մտա-
ծում էին միջոցների մասին: Եւ մեծամասնութիւնը համաձայն
էր Կովիլինի առաջարկած միջոցի հետ, այն է՝ ազատել գիւ-
ղացիներին հողով, այսինքն հողը դարձնել մշակող գիւղացու
սեփականութիւն, իսկ կալուածատիրոջը յիճարել նրա դինը՝



Վ. Միլ. Ս. Գերասիմով
(1828—1893)

զանձարանից. ապա գիւղացի-
ներից յիտ առանալ կրկար
տարիները ընթացքում գան-
ձարանի տուած փողը: Այդ
ազատամտական խմբին էին
պատկանում Իւրի Սամարինը,
Իշխան Վ. Ա. Չերկասկին,
Ունկովսկին, որ ապա արսո-
րուեց ներքին գործերի մի-
նիստը Լանսկիի հետ, ունեցած
ընդհարման պատճառով, և
այլք:

Գիւղական համայնքի և
արաէլի ջերմ պաշտպան հան-
դիսացաւ և Նիկ. Դավր. Չեր-
նիշևսկին, որ «Современник»

ամսագրի էջերում գտվում էր տնտեսութեան այդ ձևերը, որոնցից, նրա կարծիքով, հեռաւոր ապագայում պէտք է դուրս գար մի վերածնունդ պետութիւն: Իսկ Հերցէնը, Լօնդօնից, իր «КОЛОКОЛО» ամսագրի մէջ, բարոգելով ազատագրական մտքերը, յայտնեց, որ խոնարհվում է Ալէքսանդր II-ի անձնաւորութեան առաջ, և բացագանչեց. «Դու յաղթեցիր, Գալիլէացի»: Հերցէնը առաջարկեց նոյնպէս ազատել գիւղացիներին հողով, ջնջել նախնական ցենզուրան, փակել դադանի ոստիկանութեան բաժանմունքը, վերացնել մարմնական պատիժները:

Ի հարկէ, ուստի հասարակութեան այդ առաջադէմ ձեռնարկները թշնամութեան և հակառակութեան էին հանդիպում թունդ ընդդէմացիների և ճորտութեան պաշտպանների կողմից, որոնք ճորտատիրական իրաւունքի մէջ տեսնում էին ինչ-որ մի նուիրական բան և պետութեան խարխալը: Բայց բոլոր այդ հակառակութիւնները և թշնամութիւնները փշրվում էին ու ջարդվում և անկարող եղան խափանել մեծ ընթացքը:

VI

Գիւղացիներին ճորտութիւնից ազատելու պլանը պահանջում էր հսկայական աշխատութիւն և, բացի դրանից, խոչընդոտ յամառ կռիւ ճորտութիւնը պաշտպանողների դէմ: Ամբողջ այդ ծանր աշխատութիւնը և յամառ կռիւն իրանց ուսերի վրայ տարան մի քանի մարդիկ, որոնց անունը սերտ կերպով կապուած է գիւղացիների ազատագրութեան գործի հետ. այդ անձինք նուիրեցին այդ գործին իրանց հոգին և ոյժերը: Յիշենք այստեղ այդ գործիչներից մի քանիսին, որոնք ամենից շատ նպաստել են գործի աջողութեան:

Առաջին տեղը բռնում է կայսր Ալէքսանդր II Նիկօլայի-վիչը, որ կոչուեց «Ազատարար»: Նրա ազդեցութիւնը գիւղացիները ազատագրութեան գործի վրայ՝ ահագին էր: Ճիշտ է, նա միահեծան ինքնակալ լինելով հանդերձ՝ միայնակ չէր կարող իրագործել այդ նպատակ, որը իրագործուեց շատ մարդկանց միահամուռ ջանքերով, բայց Ալէքսանդր II-ի կամքը ահագին նշանակութիւն ունեցաւ: Եթէ չլինէր այդ կամքը, եթէ Ալէքսանդր II-ի հոգում մէջ չլինէր իրական, անկեղծ ցանկութիւն՝ ազատելու գիւ-




Ալէքսանդր II կայսր «Ազատարար»
(1818 — 1881)

ղացիներին, այդ գործը, թէև արդէն հասունացած, էլի կը յետաձգուէր: Բայց Ալէքսանդր II համարձակ, ի լուր ամենեցուն յայտարարեց իր ցանկութիւնը՝ ազատել գիւղացիներին, և նրա ձայնը թնդաց իրրեւ կոչնակ դէպի ընդհանուր աշխատութիւն. նա ոյժ տուեց ժողովրդի բարեկամներին՝ խօսելու այդ գործի մասին, սկսելու այն աշխատութիւնը, որի արդիւնքն եղաւ ճորտութեան ջնջումը: Այդ ժամանակուայ գրող Հերցէնը այսպէս գնահատեց Ալէքսանդր II-ի արժանիքը. «Ալէքսանդր II կատարեց շատ, շատ բան. նրա անունը այժմ ամենքից բարձր է: Նա կուտեց յանուն մարդկային իրաւունքների, յանուն տանջանքների՝ սուր բորբոսնած պլանտատորների դէմ և խորտակեց նրանց: Ոչ ուս ազգը, ոչ ևս համաշխարհային պատ-

մութիւնը այդ երբէք չի մոռանալ: Մենք ողջունում ենք նրան «Ազատարար» անունով:

Ալէքսանդր Ռ-ի մերձուր աջակիցներ և օգնականներ եղան գիւղացիների ազատութեան գործի մէջ՝ իր եղբայր մեծ իշխան Կոնստանտին Նիկոլայիւիչը, իր հօրեղբոր՝ մեծ իշխան Միխայիլ Պավլովիչի առաջնորդմամբ մեծ իշխանուհի Ելենա Պավլովնան, գեներալ ադիւտանտ Բոսովցեւիչ և Նիկ. Ս. Միլիստինը:



Մեծ իշխ. Կոնստ. Նիկոլայիւիչ
(1827—1892)



Մեծ իշխանուհի Ելենա
Պավլովնա



Գ. Բ. Բոսովցեւի
(1803—1860)



Գ. Ա. Միլիսին
(1818—1872)

Մեծ իշխան Կոնստանտին Նիկոլայիւիչը իր եղբոր՝ Ալէքսանդր Ռ-ի ամենամօտ օգնականն էր: Նա ամբողջ ժամանակ եղանակով աշխատում էր խմբագրական մասնաժողովի մէջ: Երբեք երբեք Ալէքսանդր Ռ-ի հոգին վհատվում էր, ընկնելով այն մարդկանց ազդեցութեան ներքոյ, որոնք շնչում էին նրա ականջին, թէ գիւղացիների ազատութեան գործը վտանգաւոր գործ է, ուստի պէտք է թողնել: Ահա այդպիսի քաղցնեցում մեծ իշխ. Կոնստանտին Նիկոլայիւիչը կարողանում էր միշտ ազդել եղբոր վրայ և խրախուսել նրան ու առաջ տանել գործը: Կոնստանտին Նիկոլայիւիչի մեծ արժանիքը և գնահատելի ծառայութիւնը գործին՝ կայանում էր մանաւանդ այն հանգամանքի մէջ, որ նա պնդում էր հրապարակայնութեան վրայ, այսինքն՝ որ գիւղացիների ազատութեան գործը քննուի ոչ թէ գաղտնի, այլ հրապարակօրէն, բաց-յայտնի, մի բան, որ ամենևին դուր չէր գալիս ճորտութիւնը պաշտպանողներին, որովհետեւ նրանք լաւ հասկանում էին, որ երբ գիւղացիներին ազատութիւն տալու ծրագրի բարի աւետիսը տարածուի ամբողջ Ռուսաստանում, այլ ևս հանգցնել գործը անկարելի կը լինի: Մեծ իշխանը շատ էր աշխատում. նա յաճախ ամբողջ գիշերներ նստում էր, կարդում դանազան նամակներ, ղեկուցազրեր, նա պաշտպանեց խմբագրական մասնաժողովի մէջ նազէլների սկզբունքը, այսինքն՝ որ գիւղացիներին ազատեն հողով:

Ալէքսանդր Ռ իր եղբոր մասին միշտ ասում էր. «Իմ առաջին օգնականը գիւղացիական գործում»:

Ոչ պակաս եռանդ և ծառայութիւն մատուցեց գործին և մեծ իշխանուհի Ելենա Պավլովնան: Խելօք ի բնէ և լաւ կրթւած, այդ նշանաւոր կինը կարողացաւ համախմբել իր շուրջը ձեռնհաս անձանց և զբոսնել նրանց զէպի աշխատութիւն յօգուտ ճորտութեան ջնջման: Դեռ Նիկոլայ I կայսրի օրով նա յաճախ խօսում էր գիւղացիական գործիչ կոմս Կիսելիւի հետ, որի համոզիչ ճառերը խորապէս տպաւորուեցին նրա հոգու մէջ, և նա մինչև կեանքի վերջը հաւատարիմ մնաց իր տուած ուխտին՝ նպաստել ճորտութեան ջնջման: Ալէքսանդր Ռ-ի ժամանակ Ելենա Պավլովնան արդէն գործնական միջոցներ է գիտնում և ինքն է օրինակ տալիս պոմէշչիկներին, թէ ինչպէս պիտի ազատել գիւղացիներին: Պօլտավայի նահանգում նա ունէր մի մեծ կալուած՝ Կարլովկա. նա ոչ միայն այդտեղի գիւղացիներին ազատութիւն տուեց, այլ և թոյլ տուեց նրանց յետ գնել իր հողերից այնքան մասն, որքան հարկաւոր էր գիւղացիների գոյութիւնը ապահովելու համար: Ահա այդ գործի ժամանակ իշխանուհին

ծանօթացաւ գիւղացիական ընթերցման մի այլ նշանաւոր գործչի՝ Նիկօլայ Ալէքսանդրովիչ Միլիւտինի հետ:

Ն. Ա. Միլիւտինը ծագում էր մի ոչ-հարուստ ազնուական ընտանիքից. երիտասարդը աւարտելով իր ուսումը՝ ստիպուեց մտնել 17 տարեկան հասակում ծառայութեան մէջ, ապրուստ ձարելու համար: Այդ ժամանակուայ ամբողջ երիտասարդութեան նման՝ Միլիւտինն էս շատ զուարճանում էր: Նրա մայրը շատ բարի, կրթեալ և զգայուն սրտի տէր մի կին էր և մեծ ազդեցութիւն ունեցաւ որդու վրայ, դաստիարակելով նրա մէջ մարդասիրական զգացումներ: Մի անգամ պատահեց մի դէպք, որ մեծ ազդեցութիւն ունեցաւ նրա ապագայ գործունէութեան վրայ: Բարեկենդանի վերջին օրը երիտասարդ Միլիւտինը իրան ամբողջովին նուիրեց բերկրութիւններին: Նա գնաց առաւօտեան պարահանդէսի, այդտեղից հացկերոյթին, ապա երեկոյեան նորից պարահանդէսի: Գիշերը ուշ վերադարձաւ տուն կենսութեան, գոհ, սիրահար՝ և պատմեց մօրը իր զուարճութիւնները: Մայրը հարցրեց նրան. «Հոգ տարե՛ք ես քո կառապանի մասին, բաց թողե՛ք ես նրան՝ գնալ ճաշելու և տաքանալու: Երիտասարդը իր զուարճութիւնների մէջ մոռացել էր իր ճորտ կառապանի գոյութիւնն անգամ, և խեղճ կառապանը ամբողջ 15 ժամ քաղցած ծաբաւ ֆնացել էր կառքի վրայ նստած՝ 25 աստիճան սառնամանիքի մէջ: Մայրը սաստիկ յանդիմանեց որդուն այդպիսի անզխութեան համար, և այդ լուրջ յանդիմանութիւնը ստիպեց պատանուն մաածել ճորտերի դքութեան մասին:

Եւ երբ հասաւ այն ժամանակը, որ կոչեց հայրենիքի լաւագոյն մարդկանց դէպի վեհ գործը՝ ճորտերի ազատութիւնը, Միլիւտինը ամբողջ հոգով նուիրուեց այդ գործին: Նա գրեց ընդարձակ զեկուցագրեր, որոնց մէջ ապացուցանում էր գիւղացիներին հող տալու անհրաժեշտութիւնը, և այդ սկզբունքը ջերմօրէն պաշտպանեց խմբագրական մասնաժողովում: Ծորտութեան պաշտպանները կամ կրեպօստնիկները ամեն կերպ աշխատում էին հեռացնել նրան գործից, սեպցնել կայսրի աչքում. և թէև նրանց ջանքերը աջողուեցին, և գիւղացիների ազատութիւնից մի քիչ առաջ նա իր պաշտօնից արձակուեց, բայց, շնորհիւ մեծ իշխանուհի Նելնա Պավլովնայի, որ համոզեց կայսրին, թէ որքան օգտակար է եղել Միլիւտինը, սա ձեռք բերեց իր նախկին հեղինակութիւնը:

Գինեբալ-աղիւտանտ Ե. Ի. Բօստովցեվը ծագում էր վաճառականական ընտանիքից: Երիտասարդութեան ժամանակ, երբ մի փայլուն գվարդէական սպայ էր, նա ոչնչով չէր

տարբերվում իր ընկերներից. նրանց պէս քէյֆեր էր անում և մտածում էր միայն կեանքի վայելչութիւնների ու հաճոյքների մասին: Իր համոզումներով նա կրեպօստնիկ էր, այսինքն՝ պաշտպան ճորտութեան: Բայց արդէն հասուն հասակում նրա համոզումները յեղաշրջուեցին իր որդու ազդեցութեան ներքոյ, և կատարուեց մի դարմանալի գործ. որդին համոզեց հօրը, և սո գիւղացիների ազատութեան հակառակորդից դարձաւ նրանց ջերմ պաշտպան և մինչև իր մահը կուռեց այդ գործի համար: Ահա այդ մարդուն վիճակուեց լինել խմբագրական մասնաժողովների առաջին նախագահ: Սկզբում, երբ կայսրը յանձնեց նրան այդ պատասխանատու պաշտօնը, նա կամեցաւ մերժել, բայց Ալէքսանդր Ա-ի պնդման վրայ՝ հպատակուեց: Անցնելով գործի գլուխ և տեսնելով, որ ինքը չունի հարկաւոր գիտութիւնը և պաշարը մի այդպիսի մեծ և պատասխանատու գործի գլուխ կանգնելու և երբ մասնաժողովներում սկսուեցին վիճաբանութիւններ, թէ արդեօք գիւղացիներին ազատել հոգով թէ՛ առանց հողի, ու նա նկատեց, որ իրան պակասում է հարկաւոր կրթութիւնը՝ իր հայեացքները առաջ բերելու համար, նա ուղևորուեց 1858 թ. արտասահման, ուր շատ աշխատեց. այդտեղից նա գրեց կայսրին չորս նամակ, որոնց մէջ նա ջերմօրէն պաշտպանում էր և հիմնօրէն պատճառաբանում ճորտութեան ջնջման անհրաժեշտութիւնը: Այդ նամակները սաստիկ ազդեցութիւն ունեցան կայսրի կամքի և վճռակաճութեան վրայ: Դժբախտաբար Բօստովցեվին վիճակուած չէր տեսնել իր աշխատութիւնների պտուղը. նա չտարեց մինչև փետրուարի 19-ը և մի քիչ առաջ մեռաւ. ու մեռնելիս նրա ամբողջ մտածողութիւնները կենտրոնացած էին այն հարցի վրայ, թէ ինչպէս կը վերջանայ այն գործը, որի մէջ նա գրել էր իր հոգին:

Տեսնենք այժմ, թէ ինչպէս աւարտուեց այդ գործը:

VII

Մենք տեսանք, որ «գաղտնի» կոմիտէի տեղ հաստատուեց «Գլխաւոր կոմիտէի գիւղացիական գործի համար», Բօստովցեվի նախագահութեամբ: Բացի զրանից՝ ներքին գործերի մինիստրութեան կից հաստատուեց և զեմստովային բաժանումը,

ուր մտնում էին նահանգական կոմիտէաների բոլոր ծրագիրները: Գլխաւոր Կոմիտէտին ևս կից կազմուեց մի յանձնաժողով նահանգական կոմիտէաների ծրագիրների նախնական քննութեան համար: Այդ յանձնաժողովի միջից հետզհետէ կազմուեցին խմբագրական մասնաժողովները, որոնք և գլխաւորապէս իրանց ուսերի վրայ տարան ամբողջ աշխատութիւնները գիւղացիների ազատութեան մասին:

Մինչ զեմտովային բաժանմունքը և ապա նաև խմբագրական մասնաժողովների մեծամասնութիւնը յարկեցին լաւագոյն և գիտակ մարդկանց կարծիքներին, Գլխաւոր Կոմիտէտը, որի կազմի մէջ կային և ճորտութեան պաշտպան անձինք, ինչպէս միտրոպոլիտ Ֆիլարէտը և այլք, երկար ժամանակ յամաւում էր ճորտատիրական հայեացքների պաշտպանութեան մէջ:

Ալէքսանդր II կայսրը 1858 թ. ճանապարհորդեց Ռուսաստան, և ռուս ժողովրդի կենցաղի տխուր պատկերը ամբապնդեց թագաւորի մէջ որոշում: Վերջ տալու ճորտատիրութեան: Վերագտնալով այդ ուղեորութիւնից, թագաւորը օգուտ էր քաղում ամեն մի առիթից՝ խօսելու համար ազնուականների հետ և նորից կոչ անելու նրանց, որ կամաւորապէս կատարեն պատմական անհրաժեշտութիւնը: Դրանից յետոյ նրա վրայ սաստիկ տպւորութիւն գործեցին, ինչպէս յիշեցինք, Բոստովցեւի արտասահմանից գրած նամակները: Եւ ահա 1858 թ. հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին, երբ կայացան Գլխաւոր Կոմիտէտի նիստերը, թագաւորը բացատրեց իր հրահանգի մէջ, թէ խմբագրական մասնաժողովների անդամները որպիսի հայեացքներով պէտք է զիջւալարուէին. այդ հայեացքներից շատերը Բոստովցեւի արտայայտածներն էին, այն է՝ 1) որ գիւղացին իսկոյն զգայ, թէ իր կենցաղը բարոյքուած է, 2) որ պոմէշչիկը իսկոյն հանգստանայ, թէ նրա շահերը պաշտպանուած են լինելու, և 3) որ զօրեղ իշխանութիւնը մի բռնէ անգամ չխախտուի տեղում: Ապա հրահանգի մէջ ցոյց էր տրուում, որ անհրաժեշտ է աշխատել, որպէս զի գիւղացիները յաջորդաբար դառնան հողատէրեր: Ուրեմն գահի բարձրութիւնից անդաւնալի կերպով վճռուած էր հողի վերադնումը, և մասնաժողովները պէտք է միայն մշակէին ծրագրի մանրամասնութիւնները, թէ ինչպէս իրագործել ծրագիրը, որ ոչ գիւղացին փաստելի, ոչ հողատէրը: Մինչ այդ՝ ամենաթունդ վիճաբանութիւններ էին լինում մասնաժողովների մէջ այն հարցերի շուրջը, թէ գիւղացուն պէտք է ազատել հողով թէ՞ առանց հողի: Ազատել առանց հողի՝ կը նշանակէր 25 միլիօն մարդկանց բաց թող-

նել աղքատ. իսկ եթէ տալ նրանց իրանց մշակած հողերը՝ կը նշանակէ զբէլ պոմէշչիկներին, որոնք այդ դէպքում կը զբրկուէին և՛ հողից, և՛ գիւղացիներից: Ինչպէս հաշտեցնել ուրեմն գիւղացիների և պոմէշչիկների շահերը: Ի վերջոյ գտան մի այսպիսի ելք — գիւղական հողաբաժինների համար նշանակել յետգնումն. գանձարանը կը վճարէ պոմէշչիկներին՝ գիւղացիներին տրուող հողաբաժինների գինը, իսկ ինքը գանձարանը քիչ-քիչ կը ստանայ գիւղացիներից իր տուած գումարները 49 տարուայ ընթացքում: Դրանով երկու կողմերին ևս զոհացուցնում էր լինի: Բայց ճորտատէրերը կարողացան աջողեցնել, որ գիւղացիական հողաբաժինները (նադէշները) փոքրացուեն և չը տրուեն այն չափով, որ առաջ ենթադրուում էր. բացի դրանից՝ հողը բաժանուեց անհաւասար կերպով. պոմէշչիկները պահեցին իրանց համար լաւագոյն հողերը, իսկ գիւղացիներին նադէլ տուին վատ հողերը:

Նահանգական կոմիտէաները մշակելով գիւղացիներին ազատելու իրանց պլանները՝ ուղարկեցին Պետերբուրգ, Գլխաւոր Կոմիտէտը, իրանց պատգամաւորներին: Այդ պատգամաւորներից միայն քչերն էին պատկանում ազատամիտների բանակին և զրանց թւում Տվէրի պատգամաւորների պարագլուխ Ունկովսկին, որոնք ներկայացրին կայսրին մի ուղերձ, ստորագրուած 5 պատգամաւորներից, որի մէջ խնդրում էին 1) շնորհել գիւղացիներին լիակատար ազատութիւն՝ տալով նրանց հողըն ի սեպականութիւն յետգնման միջոցով և այնպիսի պայմաններով, որոնք կործանաբար չլինեն պոմէշչիկների համար, 2) կազմել տնտեսական-կարգադրիչ վարչութիւն, ընդհանուր բոլոր դասակարգերի համար, հիմնուած ընտրողական սկզբունքի վրայ, 3) հաստատել անկախ դատաստանական իշխանութիւն, այն է՝ երդուեալների դատարան և քաղաքացիական դատատանական հաստատութիւններ, անկախ՝ վարչական իշխանութիւնից, 4) տալ հնարաւորութիւն հասարակութեանը՝ մամուլի միջոցով հասցնել ի տեղեկութիւն բարձրագոյն իշխանութեան՝ տեղական կառավարութեան պակասութիւնները և զիջումները:

Իսկ ազնուականութեան միւս մասը, բաղկացած 18 պատգամաւորներից՝ որոնք շատ էլ համակրող չէին ճորտութեան ջնջման, ներկայացրեց մի այլ ուղերձ, որի մէջ ազնուականները խնդրում էին թոյլ տալ իրանց քննել խմբագրական մասնաժողովների վերջնական աշխատութիւնները մինչև Գլխաւոր Կոմիտէտ մտցնելը:

Կայսրն այդ ուղերձներն ուղարկեց Գլխաւոր Կօմիտէտին՝ որ որոշեց Տվէրի ազնուականների ներկայացրած ուղերձի ստորագրողներին յանդիմանութիւն կարգաւ. այդ դէպքը ընդհանուր տրտունջ յարուցեց և մի քաջ երկիւղ ծագեց, թէ կամենում են վերադառնալ հին ժամանակներին: Կասկածները աւելացան. խախտուեց վստահութիւնը դէպի Կօմիտէտի աշխատութիւնները, մանաւանդ երբ մինիստր Լանսկոյը, որ վախենում էր, թէ խռովութիւններ կարող են ծագել 1859 — 1860 թ. աղանականական ժողովների ժամանակ, ուղարկեց մի շրջաբերական, արգելելով շօշափել ժողովներում գիւղացիների ազատութեան հարցը: Երիտասարդութիւնը սկսեց այլ ևս խէթ նայել Կօմիտէտի վրայ և կազմեց գաղտնի շրջաններ ու ժողովներ: Ցենզուրան սաստկացաւ և այլ ևս անհնարին դարձաւ գրական վիճաբանութիւնները այնպիսի մտածողների, ինչպէս Դօբրոլիւբով, Չերնիշեւսկի, համայնքի, արտէլի և գիւղացիների տնտեսական կեանքի այլ ձևերի մասին: Սկսուեց, ինչպէս կոչվում է, «բէակցիա»: Այդ միջոցին վրայ հասաւ և Բօստովցեվի մահը, 1860 թ. սկզբին. վհատուած, յուսահատուած ազնուականների մղած կռուից և խմբազրական մասնաժողովների վրայ եղած յարձակումներից՝ նա հիւանդացաւ և մեռաւ մինչև վերջին քօպէն անձնուէր մնալով «սուրբ գործին»: Նրա տեղ Գլխաւոր Կօմիտէտի նախագահ նշանակուեց կոմս Պանինը, որ մինչև վերջին ծովը իր համոզմունքներով կրեպօստնիկ էր, այսինքն ճորտութեան պաշտպան, որի աչքում ժողովուրդը միայն «մի ստոր խառնիճաղանձ» էր: Այդ հանգամանքն աւելի ևս վհատութիւն առաջ բերեց:

Սակայն ոչ բէակցիան, ոչ Պանինը չկարողացան յետաձգել գիւղացիների ազատութեան հռչակումը, որովհետեւ գործն արդէն շատ առաջ էր գնացել: Շուտով կայսրի հրամանով «խմբազրական մասնաժողովները» փակուեցին և նրանց բոլոր աշխատութիւնները յանձնուեցին Գլխաւոր Կօմիտէտին, որին մնում էր միայն պատրաստել ազատութեան մանիֆեստը: Այդ մանիֆեստը կազմելու գործը նախ յանձնուեց Սամարինին և Միլիւտինին, բայց նրանց կազմածը, իբրեւ ազատամիտ ոգով գրուած, դուր չեկաւ Պանինին, և սա միտքօպօլիտ Ֆիլարէտին յանձնեց այդ կարևոր դօկումենտի խմբագրութիւնը: Ֆիլարէտը, որ, ինչպէս գիտենք, չէր համակրում ազատագրութեան դործին, թէև յանձն առաւ, բայց ակամայ, հարկադրուած Բարձրագոյն կամքից, Փետրուարի 5-ին (1861 թ.) մանիֆեստը կազմուեց

և ուղարկուեց կոմս Պանինին: Մանիֆեստի առաջին ձևից դուրս ձգուեցին շատ ջերմ արտայայտութիւններ: Վերջապէս հասաւ XIX դարի Ռուսաստանի զարգացման մէջ ամենամեծ օրը, փետրուարի 19-ը, երբ պետական քաղաքական Բուսովը տարաւ թագաւորին մատուցանելու՝ ստորագրութեան համար՝ թանկագին ակտը, որով 22 միլիօն ճորտերի՝ ազատութիւն էր տրվում:

Եւ Ալէքսանդր II մի փետուրէ գրչով, որ այժմ ևս պահպանվում է Սարատովում, Բադիշչեվի թանգարանում, ստորագրեց պատմական այդ մեծ ակտը, որ ապա ուղարկուեց տպարան՝ տպագրութեւն հազարաւոր օրինակներով: Կատարուեց ազատագրութեան մեծ գործը: Բայց մանիֆեստը իսկոյն չհրատարակուեց. միայն մարտի 5-ին, բարեկէնդանի վերջին օրը նա կարգացուեց բոլոր եկեղեցիներում և ապա կայցուեց պատերին իբրեւ աֆիշներ: Որքան էլ նրա լեզուն անհասկանալի էր հասարակ ժողովրդի համար, բայց գիւղացին հասկացաւ, ըմբռնեց, որ ինքն այլևս ազատ է, ազատ մարդ է, այլևս ստրուկ չէ, ճորտ չէ: Եւ արքայական սուրհանդակները սրարշաւ տարան Ռուսաստանի բոլոր անկիւնները մանիֆեստը՝ յայտարարելու ժողովրդին:

Ու այսպէս՝ այն մեծ գործը, որին վաղուց փափագելով փափագում էր գիւղացիութիւնը և կրթեալ հասարակութեան լաւագոյն մասը, կատարուեց: Ծորտութիւնը տապալուեց, իբրեւ հին, փտած ծառ, որ պէտք է անպատճառ տապալուէր: Գիւղացիների ազատութեան հակառակորդները թագաւորին վախեցնելու համար փափսում էին, թէ այն օրը, երբ հրատարակուի ազատութիւնը, գիւղացիները ապստամբելու են, յարձակուելու են կալուածատէրերի վրայ և կացիներով սպանելու են ամենքին. բայց, ի հարկէ, ոչ մի բան չպատահեց. ընդհակառակը, այդ օրը, այն է մարտի 5-ին, տիրում էր մի առանձին, հանդիսաւոր խաղաղութիւն և տրամադրութիւն: Խորին ուրախութիւնը զգացվում էր մեծ լրջութեամբ: Մարդիկ, որոնք վաղուց սպասում էին այդ ցանկալի օրուան, իրար հանդիպելիս ողջագուրվում էին ասելով, ինչպէս զատկին են ասում՝ «Քրիստոս յարեաւ ի մեռելոց», և շատերը նոյն իսկ լաց էին լինում ուրախութիւնից:

Ու 1861 թ. մարտի 5-ից սկսած՝ Ռուսաստանը սկսեց ապրել նոր կեանքով: Այդ օր ողորակական հողի վրայ ծա-

գած արեւը լուսաւորեց արդէն ոչ ստորուկներին, այլ ազատ մարդկանց:

Եւ թող օրհնեալ լինի յիշատակը այն մարդկանց, որոնք զլուսի բերին ժողովրդի ազատութեան մեծ գործը*):

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.—Ներկայ տեսութիւնը կազմեցին Հ. Առաքելեան և Պետրոս Զաքարեան, օգտուելով թէ թարգմանաբար և թէ քաղաածօրէն մի քանի աղբիւրներից, զիստաւարակ հետեւեալ հրատարակութիւններից 1) «Падение Крѣпостнаго Права», очеркъ Т. П. Сократовой, Москва, 1911, 2) «Какъ крестьянамъ дали волю», Н. В. Тулупова и П. И. Шестакова, изданіе Сытина, Москва, 1911 г. և 3) Բօկհաուզի բառարանը:



*) Ներկայումս Ռուսաստանում կենդանի են այդ գործիչներից՝ 1) Նիկոլայ Միլեւսկի հարազատ եղբայրը՝ նախկին ղեկավարական մինիստր Դիմիտրի Միլեւսկին, որին Ռուսաստանը պարտական է կանանց առաջին բարձր կուրսերի բացումը և ընդհանուր զինուորագրութիւնը, և 2) յայտնի աշխարհագիր-վիճակագիր Սեմենովը, անդամ Պետական Խորհրդի, որ նորեւն ստացաւ Տեւան-Շանսկի տիպոգրֆ:

Ազատագրութեան նշանաւոր գործիչներից մինն էր և հայազգի Հայ-բապտիստներ (Аврапетовъ), «ուղէլի» ներկայացուցիչը, Տուրքենեվի բաբեկամը, սակայն նրա մասին բաւականաչափ տեղեկութիւններ պակասում են:

զոր տար յանձնարեալ զորքն ոչ անոր հետքն ունի որպէս
նշանակուի:

Եւ իմաց արժեանք իմից չթողնուի որ խառնուի իրենց
տեղն զորքն զանգիւղի որպէս անհրաժեշտ զորքն:

ՅԱՆՎԱՐԴԱՆԻՔ.—Երկուց անգամ քիչն հարկեցին է. եւ
անպիտան ի Գեորգի Բագրատունի, որպէս եղի իւր ինքնակա-
րութիւնն ի քիչ խառնածովն իւր զանգիւղի տեղն: Եւ անպի-
տան իւր հարկանքն իւր ինքնակա-
րութեան: Եւ Գեորգի Բագրատունի, իւր 1714 թ. 21 հոկտե-
մբեր ամսին զանգիւղի տեղն, իւր Գեորգի Բագրատունի
աւանդաւոր Գեորգի, իւր 1714 թ. 21 հոկտեմբեր ամսին
անպիտան իւր հարկանքն իւր ինքնակա-
րութեան:



Գրե.

ՀՀ Ազգային գրադարան



NL0202188

